

1981

24  
F-49

1911

2010





ՀԱՅ ԳԱՐԴԱՊԵՏ

112

✓ 73

ՔԱՐՈՋՉԱԿԱՆ

ԹՈԹՈՎԱՆՔՆԵՐ

Գ.



Գ. Ա. Գ. ԱՐՇԱԳԱՆ

Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

1911

24  
P-49



Աղբյուրաբան Հ. Արևիկյանի Գրքանոցի  
Յրագրի շարժումներ

ԲՆՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ - Գ.


24  
P-49

սե.

ՄԷՆԵՐ

ՔԱՐՈՋՉԱԿԱՆ  
ԹՈԹՈՎԱՆՔՆԵՐ

Handwritten signature in blue ink.



1002.

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

1911

1005

Handwritten text at the bottom left, possibly a library or collection number.

*Faint handwritten text at the top of the page, possibly a name or address.*

30460-42

2001



(49554)

13429-58

**ՆՈՒՒՐՈՒՄ ԵՄ**

**ՆՈՒՇԻ ՔԱՂԱՔԻ ՊԱՏՈՒԱԿԱՆ**

**ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ**

**ԵՐԱԽՏԱՊԱՐՏ ՍԻՐՈՎ:**





## ՁԵՁ ԵՄ ՆՈՒԻՐՈՒՄ,

Ձեզ՝ Շուշու սէգ քարաժայռի, տիրակերտ գահոյքի վրայ բազմած, հայրենիքի շէնն ու աւերը հաւասար սիրով գրկած ժողովուրդ, Ձեզ եմ նուիրում.

Ձեզ՝ որ մոխրամած գլխով, հայրենի քաղաքի մոխիրները ձեր տաք շնչով վանում, արիւն արցունքով էք լուանում, որ նրանց տակից կեանքը, մեռած կեանքը յարուժիւն առնի, ծառանայ, կանգնի Արցախի այդ հպարտ սրտում: Հայրենի հողին ու ջրին հաւատամքներ, Ձեզ եմ նուիրում.

Ձեզ՝ Բարձրակատար Ս. տաճարներ, փառաւոր՝ ինչպէս սէգ լեռներ, հպարտ՝ ինչպէս ամպածրար նոճիներ, ընդարձակ՝ ինչպէս որդեսէր մօր գիրկ ու ծոց, ուր գաւակներն են ծուարում. Ձեզ, որոնց շողարձակ խաչերը գիշերը՝ լուսնից, ցերէկն՝ արևից լոյս են առնում, լոյս են դառնում, լոյս են տալիս գողտրիկ քաղաքին, որոնց շողերի մէջ տիրական օրհնութիւնն էի ողջունում, Ձեզ եմ նուիրում.

Ձեզ՝ հայաշունչ վարժարաններ, որ տազնապի բրտունքով գիր ու դպրութիւն էիք սերմանում, սփռում մատաղ սերնդի անարատ սրտում.

Ձեզ՝ ուր հայ ծնողաց աչքերն է յառած Բարու, Գեղեցկի, Վսեմի համար, որոնցով պիտի զուգուին, զարդարուին իրենց որդիքը, իրենց սարերու շուշանի նման ու հայրենիքին անոյշ հոտ, համ տան, Ձեզ եմ նուիրում.

Ձեզ՝ հէզ հայրենիքի աղքատանոց ու որբանոց, ուր՝ յանձին աւերից, աւերակներից ու մոխրից հաւաքած սևաւոր այրիների, ու բազմավէր որբերի, հայկական արցունքն է խտացած ու սլատսպարան գտած, Ձեզ եմ նուիրում.

Ձեզ՝ անսփոփանք քահանայութիւն, լքեալ Անապատ, աշխատող ու աղօթող ազնիւ արհեստաւորներ, անձնուիրութեան տիպար իշխաններ, աշխոյժ վաճառական, լաւասիրտ տիկնայք, ընտիր օրիորդներ, ուշիմ պատանիք, Ձեզ եմ նուիրում.

Ձեզ՝ ամենիդ, ջիզնարով քաղաք, որ ինձ առատութեամբ պարգևած, ինձ հետ ճամբու պաշար դրած սէրն ու յարգանքը հալալ արիք, ինձ հետ մէկտեղ լացիք, մէկտեղ խնդացիք, մէկտեղ յուսացիք, մէկտեղ թախծեցաք, Ձեզ եմ նուիրում.

Ձեզ եմ նուիրում այս «Թոթովանքները»:

Ձեզ եմ նուիրում ձեզնից առածս. փոխադարձ սիրոյ էինք կարօտում, ձեր սէրը ոգևորեց ինձ և «Մէրը» քարոզեցի:

Փորձութեան մէջ ընկանք՝ «Փորձութիւն» դասը կարդացի:

Փորձողի ձեռքից հալածական ու լքեալ հե-

ուսնում էինք հայրենիքի սրբազան ծոցից, զարձի կարօտով «Գործ» կոչեցի:

Փերի էինք բռնութեան և մեր ազատ հոգին գերող կրքերին, ազատութեան բռնն ծարաւ զգացինք «Ազատութիւն» ճառեցի:

Անյուսուցեան սուր դանակը փորձում էր կտրել մեր յոյսերի թևերը, թռիչքը խափանել զէպի բարձր կեանքը, «Յոյսը» գովեցի:

Անմահ մնալու աստուածային կայծերը հանգչում էին մերթ ընդ մերթ մեր մէջ «Յարութեան» աւետիքը կարգացի:

Մեզ վրայ անարգարութեան այրող տաղն զգացինք ու ցանկացանք արգարութեան ուխտաւոր դառնալ խորհրդաւոր սև վարագոյրի առաջ և ես «Սև վարագոյրը» ցուցի:

Մեր տառապանքի օրերում նախնեաց հոգով ու հաւատով պէտք կար աղօթելու և խրատական դաս առնելու, մէկտեղ ծունկ իջանք Վարդանանց առաջ և ես «Ս. Վարդանանց յիշատակին» ներբող յօրինեցի:

Այս ամէնից մի փոքրիկ փունջ կազմած, սիրոյ թելով կապած, զգացմունքի ցօղով ցօղած, սիրելի քաղաք, որպէս «զքոյս ի քոյոց» Ձեզ եմ նուիրում երախտապարտ սիրով:

Էլ յոյս չունիմ թէ Ձեզ վերստին կտեսնեմ. այնքան հսկայ լեռներ, այնքան փշոտ անտառներ, այնքան մթին ձորեր, այնքան եղեգնուտ ճահիճներ են բաժանում մեզ, առանց մեր սրտերը բաժանել կարենալու:

Ուստի այս «Թոթովանքներս» եմ նուիրում  
 Ձեզ, որպէս ջերմագին փոխադարձ բարկներ,  
 որպէս ձեր սրտիցն առած ուժգին բարկների  
 տկար արձագանգներ:

Միշտ Ձեր ԲՆՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏ

1910. 15 Նոյեմբերի

Ս. Էջմիածին.



## Յ Ա Ն Կ

Սէր.

Փորձութիւն.

Դարձ.

Արթնութիւն.

Յոյս.

Ազատութիւն.

Ս. Վարդանանց յիշատակին.

Յարութիւն.

Սև վարագոյրը.



## Ս է Ր

«Այս է պատուէր իմ զի սիրեսցիք զմիմեանս».  
(Յովհ. աւ. փե—12):

«Մեծ ևս քան զայս սէր ոչ որ սննի, եթէ  
զանձն իւր գիցէ ի վերայ բարեկամաց իւրոց».  
(Նոյն 13):

«Սէր»․ ահա տաճարներից ամենասուրբը,  
որի դռներին մօտենալիս՝ բանխմոց, խոհուն  
մարդու սրտին ու ականջին մի հրամայական  
ձայն է զալիս. «Լոյժ գկօշիկս ոտից քոց, զի  
տեղիդ յորում դու կաս, երկիր սուրբ է ։»

«Աստուած ի ներքս ի ձեզ է», ձեր սրտումն է  
Աստուած և այդ Աստուածը Սէրն է։

Երկիւզածութեամբ լցւում, պատկառանքով  
լրջանում, բարեպաշտութեամբ ջերմանում ես,  
երբ Սէրն իւր ս. տաճարի մէջն է բազմում։

Նրա առջև, Նրա ս. սեղանի պատուանդա-  
նին, Նրա ս. ոտքերի վրայ ցօղում ես արցունքդ,  
սփռում հիացմունքդ, բուրում ես զգացմունքդ,  
նուիրաբերում սիրտդ, մխում ես լնական պէս,  
հալւում վառուող մոմի պէս, աղօթում ես և  
զգում թէ ապրում ես, կեանք ես վայելում։

Եթէ կեանքի դաժան, արեակէզ ճանապար-  
հին, որ մանկան օրօրոցից սկսւում և ծերունու  
լայնաբերան գերեզմանով է վերջանում, մի զո-

վացուցիչ կենսատու գեփիւռ է փշուճ, այդ  
 գուլարթարար Սէրն է:

Եթէ քաղցրութիւն գանիս դառնահամ կեանքի  
 մէջ, այդ անուշութիւնը Սէրն է:

Եթէ տանջանքիդ մէջ մի սփոփանք՝ ամօքիչ  
 դարմանը Սէրն է:

Աւետարանի մէջն իսկ Սիրուց առաւել  
 բարձր, դաւանելի առաքինութիւն չկայ: Աւե-  
 տարանի սկիզբն ու վախճան, Այբ-ն ու Քէ-ն,  
 ամբողջ Աւետարանը Սէրն է:

Յաւիտեանս փանք Իւր սուրբ անուան, որ  
 աստուածային այդ կենսատու կայծը՝ Սէրն իւր  
 կրծքումը, իւր սրտի նուիրական խորշումը ծրա-  
 բած, աշխարհ բերաւ ու նրանով վառեց մարդ-  
 կանց պաղ հոգիները, նրանով լուսաւորեց մեր  
 ներքին խաւարը և նրան Իրեն հաւասար դաւա-  
 նելի Աստուած յայտարարեց:

Աստուածացած Սէրը մարդկանց շնորհեց  
 Իմացականութիւն, Ազատութիւն, Ոյժ եւ Փրկու-  
 թիւն:

Սէրը նախ և առաջ աղբիւր է իմացականու-  
 թեան. Երբ մաքուլ սրտում շարժուում է Սէրը  
 դէպի մի առարկայ, դարձում է նրա մէջ և կեն-  
 դանի հետաքրքրութիւն՝ իմանալ թէ ի՞նչ է այն  
 հրապուրիչ առարկան:

Երբ սիրում ես մի մարդու, քո ուշադրու-  
 թիւնը գրաւում է նրա մէն մի շարժումը, խօսքը,  
 մաքերը, զգացմունքը, գործը: Դու նրան ուսում-  
 նասիրում, իմանում ես:

Երբ սիրում ես մի ծաղիկ, դու ուսումնասիրում ես նրա ձևը, թերթիկները, դասաւորութիւնը, հոտը:

Ձկայ նոյն իսկ որ և է գիտութիւն, որ Սիրուց բղխած չլինի. նախ սիրում է գիտնականը, ապա ուսումնասիրում և իմանում:

Ոչ որ այնպէս չի ճանաչում մարդուն կամ առարկան, որչափ սիրող սիրտը:

Ակներև է թէ Սէրը դառնում է աղբիւր իմացականութեան. իսկ իմացականութիւնը տանում է մեզ դէպի ճշմարտութիւնը, լոյսը, բանականութիւնը:

Սէրն աղբիւր է և Ազատութեան.

Երբ մենք Սիրուց բղխած իմացականութեամբ հասկանում ենք ճշմարտութիւնը, ըմբռնում ենք չարն ու բարին, իրականն ու ուրուականը, մարմինն ու ստուերը, հրեշտակն ու սատանան, գեղեցիկն ու տգեղը, այնուհետև մենք միայն ազատ ենք ընտրութիւն անելու:

Ազատութիւնը ընտրութեան մէջն է. սիրողը, իմացողը վատ ընտրութիւն չի անի. նա ազատ է:

Սակայն Իմացականութիւնն ու Ազատութիւնը բաւական չեն. որովհետև շատ անգամ իմանում ենք, գիտակցում ենք վատ բանը, վատ կիրքը, չարիքը, ազատ ենք հեռու կենալ նրանցից, բայց ոյժ չունինք, թոյլ ենք կամքով, չարիքն ու կիրքը մեզնից զօրեղ:

Ահա այսպիսի վայրկեաններին նրանցից

փրկուելու համար մեզ կարևոր է բարոյական ոյժ, տոկունութիւն:

Այստեղ դիմում ենք Սիրոյ աղբիւր՝ Քրիստոս Աստուծուն, աղօթում ենք, որ զօրացնէ մեզ, ոյժ աայ, ազատ, ազնիւ ընտրութիւն անելու:

Սիրոյ Աստուծոյ կենդանի օրինակն ինքն ըստ ինքեան մեզ համար քաջալերութիւն է գառնում. ճիշտ այնպէս, երբ հերոսի առջև ես կանգնած, հերոսական դործ ես տեսնում, սիրադուրսութեամբ է լցւում. քո մէջը նոյն հերոսական հոգին է զարթում: Ճիշտ այնպէս, երբ ծաղիկներն միջից ես դալիս քեզ հետ մէկտեղ ծաղկի բուրմունք ես բերում:

Արդ, տեսնենք իբրև Սիրոյ օրինակ Աստուածն Յիսուս ինչպէ՞ս սիրեց և ինչպէ՞ս է ոգևորում իսկական քրիստոնէին սիրոյ մէջ:

Երբ նա մանուկ էր, իւր մօր գրկում, նա Սէր յուզեց մայրական սրտում, և ամէն անգամ երբ Տիրամօր կրծքի վրայ Գառն Աստուած ծծում էր մայրական կաթն անուշ, մօր ծովացած աչքերից Սէրն էր կաթում նրա աչքերի մէջ: «Մեծ ևս քան զայս սէր ոչ ոք ունի, եթէ զանձն իւր դիցէ ի վերայ բարեկամաց իւրոց»: մայրն է ամենամեծ բարեկամը մարդու, նա իւր զգացմունքով է ջերմացնում մանկան, նա իւր մարմինը, իւր անձն է տալիս մանկան կերակուր, նա իւր անձն է դնում իւր բարեկամ որդու վրայ:

Եւ այսպէս Սիրոյ ակը մօր սրտում, մօր  
աչքերումն է բղխում:

Պատանին Յիսուս սիրում է իւր ծնողներին  
անձնուիրութեամբ և Աստուած լինելով հանդերձ,  
հնազանդ էր նրանց. «Եւ հնազանդ էր նոցա»  
ասում է Ս. Աւետարանը:

Իւր իսկ սուրբ արեան անկողնում, խաչի  
վրայ պառկած ժամանակը հոգեվարքի վերջին  
ճիչն արձակելիս, նա մոռանում է իւր ցաւերը  
և աստուածային ծնողաւիրութեամբ դառնում է  
խաչի պատուանդանի մօտ կանգնած Յովհաննէ-  
սին, ակնարկում է մօր վրայ և ասում. «Ահա քո  
մայրը»: Որդու պէս սիրիր իմ սիրող մօրը:

Սակայն Յիսուսի սէրը ծնողական յարկում  
չի ամփոփւում. նա եղնում՝ ասիերից եղած գետի  
նման ու տարածւում է սիրուն Գալիլիայի ծա-  
ղիկներէ, ձոխ, լոփկ, բայց սրտի հետ խօսող  
բնութեան վրայ, թռչունների վրայ:

Նրա խօսում է թռչունների մասին, երբ  
նա նկարագրում է հրաշակերտ բնութեան ձեռ-  
քով գուգուած շուշանը, զգում էս որ նրա սուրբ  
շրթունքներից Սէրն է կաթում թռչնի թռթոռն  
թևի վրայ, Սիրոյ աղամանդն է շողում շուշանի  
շուշան թերթիկի վրայ:

Նրա սէրը յորգանալով տարածւում, փռւում  
է ամբողջ Հրէաստանի վրայ. նրա մէջ լողանում  
են սնիրաւ աշխարհից հարածուածներն ու թրշ-  
ուառները, բորտներն ու Նրիքովի պարխապների  
տակ թափթփուած աղբատները:

Նրա Սէրն ընդգրկում է և օտարներին. Նա հրաշանում է այն ժամանակ, երբ սխալական, անբարոյ, թշուառ կնոջը պաշտպան է հանդիսանում դպիրների և փարիսեցիների քարկոծումից ազատելով:

Նա շեշտում է այդ օրինակով թէ մարդն՝ իւր բոլոր սխալանքներով հանդերձ, իբրև անձնաւորութիւն՝ Սուրբ է. նրա սրտում Աստուածն է բնակւում, այդ տաճարը քանդելու ոչ ոք իրաւունք ունի: Այդ օրինակով Նա անձնաւորութեան ընկած արժէքն է բարձրացնում:

Շարունակում է Սէրն իւր յաղթական հոսանքը և տարածւում թշնամիների վրայ, միայն բարեկամին, մերձաւորին սիրելը սահմանափակ է, եսական է և շատ անգամ դառնում է չարիքի աղբիւր: Սիրող մարդը պիտի ընդունակ լինի նաև սիրել իւր հալածողներին, անիծողներին, նրանց ատելութիւնն ու չարութիւնը այդպէս զինաթափ անէ:

Նրա Սէրն աստուածանում է և յաւիտենական յաղթանակով պսակւում իսաչի վրայ, երբ կանչում է Նա՝ Հայր Աստուած, ներէ իմ սպանիչներին:

Բայց ի՞նչ է Սէրը.

Սէրը բարի տրամադրութիւն է դէպի բոլոր մարդիկն անխտիր, դէպի բնութիւնը, դէպի կենդանիները: Սէրն ուրիշների անձնաւորութեանը գերադասութիւն տալն է անձնականի, եսականի վրայ: Սէրը տանջանք է, զոհաբերու-

թիւն է. նա զո՞ն է տալիս իւր անձը և երբէք զո՞ն չի պահանջում: Եւ իսկական կեանքն այդ տանջանքի, այդ անձնուիրութեան մէջն է, որ միայն սիրողին է բմբունելի:

Սիրողն Յիսուս հերոսաբար պաշտպան է կանգնում զրկեալներին ու հալածեալներին, գրու- կում բարձրացնում է վիրաւորին, վէրքերը լուս- նում, բուժում և նախատում է բռնաւորին: Նա առիւծաբար է պաշտպանում ընկած, դաժան օրէնքից հալածուող կնոջը, բայց ոչ մի անգամ ինքն իւր անձը պաշտպանելու խօսք չի ասում: Նրան ապտակում են, փշերով խոցում նրա սուրբ գլուխը, քարը են տալիս, դատարան տանում. նա լուռ է, նա իւր անձի պաշտպանութեան համար համբ է դարձել «որպէս որո՞ճ առաջի կարջի, որ ոչ բանայ գերան իւր»:

Ահա սիրոյ կատարեալ պատկերը.

Ամփոփենք այս ամէնը: Ուրեմն կատարեալ Սէքն Իմացականութիւն է, Ճշմարտութիւն է, Ազատութիւն է, Ոյժ է, Փրկութիւն է:

Նա սկսում է ամուսնութեամբ, ամբանում՝ որդեսիրութեամբ, հրաշանում՝ մարդասիրու- թեամբ, ասուլածանում՝ զոհաբերութեամբ:

Սիրոյ երկրային կատարեալ պատկերը կա- րելի է տեսնել մանուկների հասակում, երբ զեռ կեանքի սուտը, կեղծիքը, եսականը չի թունա- ւորել մանկան անբիծ հոգին: Նա պատրաստ է ամենին օգնել, նա իւր բաժին խաղալիքը, հացը, վայելքը պատրաստ է չունեցող մանուկներին



18429-58

տալ: Նա լալիս է լացող մանկան, ուրախանում՝  
ուրախ մանկան հետ:

Ահա թէ ինչու համար էր ասում Փրկիչը,  
եթէ ուզում էք Աստուծոյ արքայութիւնը մտնել,  
մանկական սիրտը ձեր մէջ միշտ պահեցէք.  
«Թոյլ տուք մանկաւոյդ գալ առ իս, զի այդպի-  
սեացդ է արքայութիւն երկնից»:

Սէրն սպանիչ ոյժն է բոլոր յանցագործու-  
թեանց, ուստի միակ զարդն է, հմայքն է կեան-  
քի, Ինքն իսկական կեանքն է:

«Եթէ մարդկանց բոլոր լեզուներովը խօսիմ,  
հրեշտակների բարբառն էլ գիտնամ, բայց Սէր  
չունենամ, ուրեմն ես մի հնչուն պղինձ եմ,  
դողանջող ծնծղայ:

Եթէ մթին ապագան գուշակող մարգարէ  
լինիմ ու հասկանամ բոլոր գիտութիւններն,  
ըմբռնեմ բոլոր խորհուրդները.

Եթէ լեռները տեղահան անելու չափ հզօր  
հաւատ ունենամ և սէր չունենամ, ոչինչ եմ:

Եթէ ունեցած—չունեցածս աղքատներին  
տամ, անձս կրակի մէջն այրեմ և սէր չունենամ,  
ոչ մի շահ չունիմ:

Սէրն երկայնամիտ է, քաղցր է. Սէրը չի  
նախանձում, չի հպարտանում, չի յանդգնում,  
իւր անձնականը չի խնդրում, չի գրգռում, չար  
բան չի մտածում, անիրաւութեան վրայ չի ու-  
րախանում, ամէն բանի հաւատում է, ամէն  
բանի վրայ յոյս դնում, միշտ համբերում է:

Սէրն ընկնել, անհետանալ չի կարող, մար-

գարէութիւնները կը խափանուին, լեզուները կը լռեն, գիտութիւնը կը խափանուի, որովհետեւ դրանք փոփոխական բաներ են և շատ քիչ բան են, քան ինչ որ չգիտենք: Բայց երեք բան միշտ կը մնայ՝ Հաւատ, Յոյս, Սէր. իսկ այս երեքիցն էլ ամենամեծը Սէրն է»:

Ահա թէ ինչպէս է սահմանում Սէրը սիրող վարդապետի սիրաքարոզ առաքեալն Պօղոս:

Դարերով հնչում էր մեր ականջին՝ «Պատուիրան նոր տամ ձեզ զի սիրես՛ջիք զմիմեանս», դարերով վառւում էր Սիրոյ կանթեղը Հայոց տաճար սրաի մէջ, դարերով լուսաւորում՝ մեր փշոտ ճամբան: Մշտահալած որսորդների նետերն երկուստեք թափւում էին մեզ վրայ, մթին անտառների գազաններն հսկում մեզ վրայ արեան ծարաւով. բայց հայ սրաի Սիրոյ սրինգը թովում էր գազաններին, որոնք՝ իրենց կատաղութիւնը մոռցած, իրենց գլուխը սիրողի ոտքերի առջևն էին դնում, որպէս կախարդուած հզօրը՝ գեղանու առաջ:

Իսկ այժմ. այս ի՞նչ սև սև պատկերներ են, որ մեր աչքերի զիմացն են գալիս.

Յովերն ու հողմեր, ծովերն ու լեռներ, երկիրքն ու դետին, բանդերն ու քարավայրեր, կախադանի ուրուականն ու մահու հրեշտակ, բարեկամ ու թշնամի, ամէնքը միասին լեզու առած, լեզու դառած կանչում են.

Հայն ատեցող, հայն անխմտա է դարձել, կիրքը զօրեղ՝ հայը ստրուկ է դարձել. Հայն

աւազակ, հայր ստախօս, մարդատեաց, հայն անձնատուր նախանձի ու չարութեանց. կեանքը թողել, մահու ճանբան է ընտրել, քաղցրիկ հայր իւր իսկ դահիճն է դարձել:

Եւ այս ամէնը նրա համար միայն, որ Սէրն է թուել իւր սիրուն ընից:

Անբարբառ եկեղեցին չի սիրում, արձաթապաշտ մարդը չի սիրում, կեղծաւոր ամուսինը չի սիրում, շռայլ մարդը չի սիրում, անաշխատը չի սիրում, նախանձոտ հոգին չի սիրում, անհնազանդ զաւակը չի սիրում, ապերախտ պաշտօնեան չի սիրում, անիրաւ տէրը չի սիրում, Սիրոյ վարդապետութիւնը իւր յարկից վոնդած վարժարանը չի սիրում. իւր իսկ զաւակներին այլոց գիրկն ու դաստիարակութեան յանձնած մայրը չի սիրում:

Կարծես մեր բաժին աշխարհը կործանուելու վրայ է: Ի՞նչուր չէ Փրկիչն ասել թէ՛ աշխարհի կործանման նշաններից մէկն էլ այն է որ «ցամաքեացի սէր բազմաց»:

Ի՞նչ ես եղել ծառ ու ծաղկով լեցուն հովիտ Հայոց սիրտ, որ արձագանդ չես տալիս մեր ձայնին, մեր կանչին. մի հարթ, հաւատար անապատ, ուր ձայները գնում, անարձագանդ են կորչում: Լքումն է տիրում և մեզ. քարոզչի ձեռքը պատրաստ է գօսանալ, զաւազանը՝ վար գլորուել, լեզուն կարկամել:

Եթէ անլուր պիտի մնանք էլ ո՞ւր ենք քարոզում, զո՞ւր ենք քարոզում:

կանգնած մեր կեանքի աւերման նախօրէ-  
կին կանչում եմ ձեզ յանուն Յիսուսի՝ «Սիրե-  
ցէք զմիմեանս»:

Ի՞նչ է սիրտն առանց Սիրոյ. աւրուած տուն  
առանց բնակութեան, տաճար՝ առանց կանթեղի,  
դատարի վանդակ՝ թուած սոխակի, մի շրջանակ՝  
առանց պատկերի, ոսկեգոյն հասկեր առանց  
հատիկի, չորցած մի ծառ՝ առանց ճիւղ ու տե-  
րևի, որի արմատին կացինն է գրած:

Ա՛խ, ե՛րբ, էլ ե՛րբ, հայ ազգ, սիրտդ՝ այդ  
սուրբ տաճար կը մտքբես նախանձի, ատելու-  
թեան, թշնամութեան, չարութեան մամուռից,  
կեղծիքի, ստախօսութեան, անիրաւութեան, բռու-  
նութեան, շահամոլութեան մաշոգ ժանգից: Ե՛րբ  
կը կանգնես, կաղօթես անոյշ, արտառուչ մըր-  
մունջով՝ պատրաստ է Քո տաճար, Քո վրան ո՛վ  
Աստուած, մաքուր Քո սրբութեան սուրբ խորան,  
Սէր Աստուած. ե՛րբ պիտի դաս, դարձիր ինձի,  
ա՛խ պիտի դաս Դու ինձ հիւր. ե՛րբ պիտի նորից  
հնչէ Քո բարբառն իմ սրտում թէ՛ «Սիրեցէք  
զմիմեանս»:



Ծանօթութիւն. խօսուած է 1909 թ. փետր. 1  
Բագուի Հայոց Ս. Լուսաւորիչ եկեղեցում: Նոյն իմաս-  
տով և Շուշու Մայր եկեղեցում:

## Փ Ո Ր Չ Ո Ի Թ Ի Ի Ն

«Ն'րթ յետո՞ւիմ, սատանայ, դայթակղութիւ  
լիմ ես» (Ա. Մատթ. Դ—10):

Լուռ էր կեանքն անապատում, աղմուկը  
մեռած: Ոչ թուչնի թեն էր ծափ տալիս օդի մէջ,  
ոչ ծառերի սոսափիւն կար այնտեղ, ոչ ծաղկի  
բոյր՝ որ գեփիւռին տար համբոյր:

Լոկ աւազով ցանուած մի դաշտ անտահման,  
վերը եթերք՝ բիւր աստղերով սլլսլացող աննման:

Միայն Լուսինն իւր կաթնագոյն շողերով  
լցրել էր ծոցն անապատի, լուսաւորել այն սև  
խումբը լերկ քարաժայռերի, որոնց ցից-ցից  
կատարները հսկայ բարձրութիւնից՝ որպէս վիթ-  
խարի ուրուականներ, հսկում էին իրենց շուրջը,  
որ կեանքը չհամարձակուի երևալ այնտեղ, որ  
մարդկային սիրտը չբաբախի յաւիտենական այն  
գերեզմանատան մէջ, որ մարդկային շունչը  
չվրդովէ անապատի մխիթարութիւնը:

Բայց Լուսնկայ սլաղ ցոլքերու տակ, քա-  
րաժայռերի գահոյքի վրայ նստած էր ՆԱ, որին  
չէր սարսափեցնում սոսկումով լի անապատը:

Քաղցից թուլցած բաղուկները ծալուած  
ծնկների վրայ էին ընկած. մահատիպ, մաշուած  
գէմքը դէպ ասաղավառ երկինքն էր ուղղել, բո-

ցավառ աչքերը լուսնկայ պաղ ծոցումն էին հանգչում:

Նա թողել էր Գալիլիայի սիրուն բարձունքները ուր մրտենու և ձիթենու զով ստուերի տակ գեփիւռն էր շոյում Նրա սիրուն գանգուր, ծաղկանց բոյր էր շնչում Նա ազատ կրծքով, ուր Գեհնեսարէթի լճակի պայծառ հայելու մէջ աստղերի հետ միասին իւր լուսաշող պատկերն էր դիտում:

Այդ սիրուն երկրից իւր ս. Հոգին հանել էր նրան և բերել մեռեալ ծովի մեռած անապատը փորձութեան հրով մաքրելու Նրա սիրտը, փորձութեան կրակով այրելու այն ամէնը, ինչ որ լուկ մարգկային էր Նրա մէջ:

Այլ ևս. Նա տեսնում էր, Նա գիտէր իւր մտքի աստուածային լուսով, Նա զգում էր իւր ս. սրտի նրբին թելերով թէ կեանքի բոլոր թշուառութիւնները յառաջ են դալիս գայթակղութիւնից: Գայթակղութիւնն ինքը սատանայ է, որի փորձութիւնից աշխարհի և ոչ մի հերոս ազատ մնալ կարող չէ:

Գայթակղութեան սատանան փորձութեան է ենթարկում մարդու քաղցով, եսական զգացմունքով, փառասիրութեամբ: Հաց, եսականութիւն, փառասիրութիւն. ահա այն խաբկանքը, որ հրապուրում է մարդկանց դէպի անբաղդութեան սանտարամետը, ինչպէս ձկան, որ խաբկանքով կարթն է ընկնում:

Սոսկալի պատերազմի մէջ մեծ մասով յաղ-

թում է սատանան, պարտում է մարդը և ստրուկ դառնում հացին, և սականութեան փառասիրութեան. ծառայ դառնում սատանային:

Օր աւուր ստուարանում է սատանայի գերիների թիւը, օր աւուր բորբոքում շատ հաց ունենալու հուրը, որի մէջ այրւում է ամենայն լաւ բան, որ կայ մարդու մէջ. օր աւուր բարձրանում է Կասկանութեան անբարտաւան աշտաւակը, օր աւուր փրփրում փառասիրութեան ծովը, որի ալիքների մէջ շատ հոգիներ են դիակնանում:

Պէտք էր այս չարիքից աշխարհն ազատել, պէտք էր ուսուցանել մարդկանց թէ՛ նրանք կոչուած են յաղթելու զայթակղութեանը, յաղթելու փորձիչ սատանային փորձութեան անխուսափելի, դաշտի վրայ, յաղթելու աշխարհին:

Այդ կռուի, այդ մաքառման, այդ դիմադրութեան մէջ պիտի ամրանար մարդու հոգին. փորձութեան կրակից յաղթութեամբ ելնողը կուս պողպատ էր այնուհետև, որի վրայ դիւական և ոչ մի նետ չէր բանի:

Փորձութիւնից յաղթական ելնողը հերոս է, աստուածային մի փունջ շող ճակտին:

Մինչ անապատի խորունկ ծոցում, բացարձակ միայնութեան սրբազան ժամերին ծնանում, ծրագրւում, կազմակերպւում էին նրա վեհ հոգու մէջ փրկութեան ցոլուն գաղափարները. մինչ Նա նայում էր անթարթ աչքով անապատի հեղասահ Լուսնին, բաց-խփիկ աչքերու նման փալ-

փրացող պայծառ ասաղերին և կամենում էր մարդկանց հոգեկան աշխարհի անապատացած, մշուշապատ երկնակամարն էլ իգէալների, վսեմ ցնորքների աստղերով ցանել, անապատի սիրահար, գերեզմանների թագաւոր փորձիչ սատանան յուշիկ քայլերով մօտենում է նրան, որ սաստիկ քաղցից տանջւում էր, որի անձը ներքին կրակով այրւում էր անուշազիր մնալուց, անշուք, անփառունակ միայնութիւնից:

Յաջող էր վայրկեանը.

— Դնւ, խեղճ անապատական, միայնութեան մէջ ցնորք ու ցաւեր գրկած անօրինակ թշուառ, շննջում է նրան զթութեան կեղծ ժպիտով սատանան. Դու քաղցից կմեռնիս: Եթէ յիրաւի Դու Աստուծոյ որդի ես, հրաման տուր այս քարերին որ հաց դառնան. առանց հացի կեանք չկայ:

Յանկարծ քաղցի տանջող զգացմունքը լռում է նրա մէջ, ինչպէս որ լռում է մահու երկիւղը հերոսների մէջ. վսեմ գաղափարներով յազեցած խրոխտ հոգով պատասխան է տալիս նա գայթակղութեան.

— Ո՛չ, միայն հացով չի ապրում մարդը, միայն հացը չէ կեանքի պահանջը, միայն հացի մէջը չէ կեանքի երջանկութիւնը, այլ այն ամէն խօսքերի մէջ, որ Աստուծոյ շրթունքներից է ելնում:

Ամաշում, բայց չի վհատում փորձիչը: Գիտէ սատանան թէ երբ ապահովուած է մարդու հացը, նա ձգտում է իւր անձը, իւր եսը իւր շրջապատի

մէջ մի բարձր տեղ դնել, կուռք դարձնել սրբութեան սեղան շինել և պահանջել, որ երկրբապագեն իրեն, գովք ու ներբող, խունկ ու ծաղիկ նուիրեն: Եւ անա փորձիչը վերցնում տանում է մենաւորին Սուրբ քաղաք, կանգնեցնում նրան տաճարի աշտարակի վրայ և ասում.

— Անտարակոյս Դու Աստուած ես, փորձիր այս բարձրութիւնից վար գլորուել և թող հրեշտակները քեզ պահպանեն, որ ոտքերդ քարերի վրայ չխորտակուին:

— Ո՛չ, ս՛վ փորձիչ, խելօք մարդը անմիտ փորձեր չի անի. չի կուրանայ իւր Յսով և Աստուծուն չի փորձի:

Ամաչում բայց չի վհատում փորձիչը, հացից և եսականութիւնից առաւել գօրեղ հրապոյր կայ, որ իւր մէջն է ամփոփում և՛ հացի և՛ եսի գայթակղութիւնը. այդ փառասէր իշխանասիրութիւնն է:

Սատանան տանում բոլոր գայթակղեցուցիչ բարձրութիւններին տիրող իշխանական լերան գլուխն է հանում նրան, ցոյց է տալիս աշխարհի բոլոր թագաւորութիւնները, շուքն ու փառքը և ասում.

— Այս ամէնը քեզ կտամ, եթէ ինձ լսես, եթէ ինձ որդեգիր ուխտաւոր դառնաս, եթէ ծունկի դաս ու ինձ երկրպագութիւն տաս:

— Կորիր, սատանայ, գրուած է թէ միայն քո Տէր Աստուծուն երկրպագանես, միայն նրան պաշտես. «Երթ յետս իմ սատանայ . . . »:

Եւ ամօթահար պարտուած գայթակղութիւնը՝

փորձիչ սատանան թողեց Նրան ու հեռացաւ:

Նրա ճնշուած կուրծքը, պատերազմի տագնապով ալեկոծ սիրտը երանական խաղաղութիւն զգեցան: Մօտեցան հրեշտակները՝ վսեմ, սուրբ գաղափարներից մարմին ու թե առած հրեշտակներն ու սկսան պաշտել Նրան:

Երբ Նա փորձութեան անապատը մտաւ, երբ Նա գալիս էր ցուրտ միայնութեան ծոցումը փորձութեանը յաղթելու և իւր սուրբ, վսեմ գործը ծրագրելու, Նա կատարեալ մարդ էր. իսկ երբ սատանան պարտուեցաւ, երբ գայթակղութեան հրապոյրը չամպոտեց Նրա վեհ հոգու շոգեբը, երբ միայնութեան մէջ Հայրն Աստուած Նրա գիրկը մարդասէր գաղափարների Աւետարանը գրաւ և գէպի կեանքն առաջնորդեց, Նա կատարեալ Աստուած էր:

Գարեբի բոլոր առաքինութիւնները, երկըրպագելի հերոսներն իրենց կեանքով, նահատակներն իրենց արեամբ, հանճարներն իրենց զրչով վկայեցին թէ անսուա և անսխալ են Յիսուսի խօսքերը, թէ միայն հացով չի կարող ապրել մարդը, միայն եսականութեամբ չի երջանկանայ կեանքը, փառասիրութեամբ չի շենանայ աշխարհ:

Այո, հացն անհրաժեշտ է մարմնի համար. բայց կեանքը միայն մարմին չէ և ոչ հացը նրա միակ կերակուրը: Կայ մարդու մէջ մի բան, որ մարմնից աւելի է ապրում և հացի չի կարօտում: Այդ այն վեհ ձգտումն է, որով մարդն անմահութեան, աստուածութեան, յարատևութեան է կարօտում:

Հերոսների արձանները, նահատակների տաճարներն ու յուշարձանները, հնութեանց թանգարանները, բարեգործական կառույցները, թատերական ներկայացումների այն սքանչելի կտորները, որոնց առջև բիւրաւոր աչքեր արցունքով են ծովանում, անստելի հաստատութիւն են թէ՛ մարդու հոգին անմահութեան է ձգտում և թէ՛ Նա անունդի կարօտ է, բայց ոչ հացի: Եւ հոգու անունդն առաւել կարեւոր է քան մարմինն, «հոգին առաւել է քան զմարմին»:

Այդ ձգտումը մարդու մէջ կրօնական ճշգրտումն է, այդ է աստուածայինը մարդու մէջ:

Մարդս ապրում է ֆիզիքապէս՝ մարմնով և բարոյապէս՝ հոգով: Մարմնի անունը հացն է, հոգու անունդն՝ առաքինութիւններ. իմաստութիւն, տոկունութիւն, զթութիւն, գեղեցկութիւն, ճշմարտասիրութիւն, սէր, հաւատ, յոյս և այլն:

Իսկական կեանքի ամբողջութիւնը միայն հացը չէ, այլ հացն ու առաքինութիւն: Առանց հացի մարդս սպրիլ և առաքինի լինել չի կարող, բայց և առանց առաքինութիւնների հացն անասնացնում է մարդուն և սատանային ստրուկ դարձնում:

Այն հացն է քաղցր, կենդանացուցիչ, որ ձեռք է բերւում աշխատանքով, ճակտի մաքուր քրտինքով: Կենարար հաց ստանալու համար պիտի լարես մկաններդ, վարժես մարմինդ, լարես ուղեղդ, բորբոքես զգացմունքդ:

Այսպիսի աշխատանքի մէջ դու երկու ազնիւ

գործ ես կատարում, հաց ես աշխատում և կըրթում ես հողիդ տոկունութեամբ, վարժւում ես քո աշխատանքիդ օրինակովը գնահատել ուրիշի աշխատանքը: Զօրանում է մէջդ գութը, խուսափում քեզնից այլոց հացը յափշտակելու դազանութիւնը:

Այստեղ հացը միջոց է դառնում մարդու ֆիզիքական և բարոյական դաստիարակութեան, նա մարմնով և հոգով, տոկուն ուժեղ է դառնում: Ահա թէ ուր է թագնուած աշխատանքի ազնուացուցիչ յատկութիւնը, սրբութիւնը:

Մի օրինակ թող առաւել լուսաւորէ միտքս, Յարատե պայծառ երկնքի տակ, մեզմ' օգով ու ճոխ բուսականութեամբ առատ Յունաստանի և Իտալիոյ բնութիւնը իւր մայրական շոայլ քնքշութեամբ յոյներին և իտալացոց անաշխատութեան է վարժեցրել: Անաշխատ հացը, պատրաստի սնունդը նրանց դարձրել է մեղկ, թուլամորթ՝ մարմնով, տկար՝ հոգով: Եւ դարերի ընթացքում ոչ մի երկրի փեր ախքան ծովահէն չեն տեսել, որչափ Իտալիոյ և Յունաստանի փերը:

Մինչդեռ Հոլանդիան՝ բնական ճահիճների և ծովային հոսանքների դէմ մաքառող այդ հերոս ազգը, իւր ասկունութեամբ յազթեց բնութեան, հղօր աշխատանքով ապահովեց իւր հացը, բայց աւելի ևս ամբացրեց իւր հոգու առաքինութիւնները:

Այժմեան աշխարհին փրօղը Ավկիանոսի

չորեք կուսի հողմերով ու ալիքներով կոծւող, բնութեամբ ցամաք Անդլիան է և ո՛չ բարեբեր Փրանսիա, որովհետև աշխատանքի տանջանքով ձեռք բերուող հացը, կուր բնութեան արհաւիրքների դէմ կռել կոփել է Անդլիացու հողին պողպատ տոկունութեամբ:

Մեր երկրի վրայով անցել է փորձիչ սատանան և առատ հաց է տուել ցամաք ճակատ մարդկանց: Բնութեան առատ ծոցից բերմունքով, այլ ո՛չ ճակտի քրտինքով, ձեռք բերուած հացը անկիրթ, թոյլ ու մեղկ է թողել ոմանց մեծատունների հողին, պատճառ է դարձել որ նրանց սրտի մէջ առաքինութեան ընծիւղները չզօրանան, այլ իրենց խանձարուբուժը մեռնին:

Այս տեսակ հարուստները չարիք են կեանքին, որովհետև նրանց առատ հացը աշխատաւորների զրկանքով է շաղախուած, անգթութեամբ հունցած:

Նրանք չարիքի յորդահոս աղբիւր են նաև իրենց սերնդին:

Անաշխատ մեծատան անվաստակ որդին պատրաստի հաց վայելելով, զրկոււմ է աշխատանքի սուրբ դաստիարակութիւնից, մնում է հողով տկար, ախտերի հակամէտ և դատապարտոււմ է ապագայի քաղցածութեան:

Այն բողոքող ձայները, որոնք որոտում են դրամատիրութեան և հացի լեռների վրայ՝ ըստ Աւետարանի, իրաւատէր են: Սակայն հացի խընդիրը բարւոքելու տնտեսական բարւոքման այդ առաքեալները միակողմանի են. նրանք միայն

հացն են կեանքի ապահովութիւն համարում, իսկ ներքին մարդու, սրտի սննդի վրայ ուշք չեն դարձնում: Հացի դաստիարակչական դերն են մոռանում:

Բռնութեամբ հաց խել, աշխատանքի սները փակել անաշխատութեան ճնշումով, սակաւ ժամերի աշխատութեամբ շատ վարձ պահանջել և՛ որ առաւել անվայելն է, արեան սպառնալիքով հաց յափշտակել, նշանակում է հաց ունենալու դերը նոյնը թողնել և միայն դերասաններին փոխանակել առաւել վատ դերասաններով:

Միակողմանութիւնը, խնդրի յաջող լուծման դժուարութիւնը յառաջ է գալիս նրանից որ զրկուածները իրենց հացն ապահովելու համար նշանակութիւն չեն տալիս բարոյական զաղափարներին և իրենք այդ զաղափարների վարդապետութիւնը հանում են իրենց ծրագրից ու իրենց կեանքով չեն ապացուցանում:

Հասկանալի պիտի լինի թէ սոցիալական այդ մեծ խնդիրը կեանքի արեկոծ ծովով յառաջ տանելու և նաւահանգիստ հասնելու համար անտեսագէտ ընկերավարականն — սոցիալիստն ու բարոյագէտը միասին պիտի գործեն, Աւետարանն ու գիտութիւնը՝ դաշնակից:

Սյլապէս՝ հացը դառնում է փորձիչ սատանայի առաջարկածը, որ պիտի մերժէ իսկական գործիչը կանչելով սատանայի երեսն ի վեր, «Յ'րթ յետս իմ, սատանայ, ոչ միայն հացիւ կեցցէ մարդ»:

Փորձիչ սատանան կուճացրել է և մեր հոգու

աչքը եսականութեան գայթակղութեամբ:

Երբ փորձիչը կողոպտում հանում է մարդու սրտից երկրպագելի առաքելութիւնները՝ հաւատը դէպի վսեմն ու գեղեցիկը, սէրը դէպի ընկերը, յոյսը դէպի բարին, յարգանքը դէպի երախտաւորը, պատկառանքը դէպի սրբութիւնը, ձգտումն դէպի գիտութիւնը և հնձած ծառ ու ծաղկի տեղը եսականութեան աւազով է ծածկում, մարդը դառնում է ինքն իրեն համար չաստուած, մի կուռք իւր սրտի անապատում ցցուած, որ այլոց երկրպագութիւնն է պահանջում:

Թէ եսականութեան կորստաբեր հպարտութեամբ այժմ ամէնքն էլ աստուած են փորձում, հարցուցէք այն բանուորին, որի լեզուից շողմբորութիւն չի անձրևում գործատիրոջ տաքերին, հարցուցէք այն գործատիրոջ, որի բանուորը Արամազդի վէհութեամբ անարգանք է տեղում նրա երեսին. հարցուցէք այն ծնողներին, որոնց գաւակները՝ հայրական յարկն արհամարհելով, հեռացել, օտար վայրերում իրենց երկրպագութեան կուռքն են կանգնել. հարցուցէք ծնողների աչքից հեռացած, մտքից մոռացուած և օտարների գրկումը դաստիարակող, աւելի շուտ անգաստիարակ մնացող խեղճ գաւակներին. հարցուցէք այն կնոջ, որի ամուսինը անից գուրս է գանւում, հարցուցէք այն մարդուն, որի կինը օտար կրօնք է պաշտում, հարցուցէք այն երիտասարդին, որ ամուսնութիւնից է սարսափում. հարցուցէք այն աղջկան որ ամուսնութիւնից է զարշում, հար-

ցուցէք այն զոհին, որ բռնութեան ձեռքիցն է նետահար, հարցուցէք այն մարդասպանին, որ կախադանի վրայ է օրօրուում:

Այս սոսկալի դրութիւնը ստեղծուել է միայն և միայն այն մոլար, եսական ձգտումով, որի վախճանը մարդկանց վախճանական յուսաբեկութիւնն է և մահը:

Սպանութեան և ինքնասպանութեան սարսուեցուցիչ օրինակները, որոնցով լի է կեանքը, լի է արդի մամուլը, կրկնացած *Նսի* գայթակղութեան արիւնոտ արդիւնքն են: Արիւնը խեղդել է մարդկանց գութը. քնքոյշ կանայքն իսկ՝ ընկած դիակների մօտով անցնելիս, ժպտում են միայն:

Եսականութեան փորձութիւնից փրկուելու միակ ձանաղարհն է փորձիչի երեան ի վեր շարտել. «Երթ յետս իմ, սատանայ»:

Սատանան փառասիրութեան, իշխանութեան գայթակղութեամբ ևս ընկճել է մեր ժամանակը:

Գովելի է փառքը, երբ նա ազնիւ գործունէութեան ընական հետեանքն է, այլ ոչ նպատակը: Աստուծուց է իշխանութիւնը, երբ նա կրթիչ, դաստիարակիչ ոյժ է, հաւասարասէր հայր՝ ամէնքի համար, ինչպէս որդեսէր բնութիւնը, որ իւր ծաղիկն ու պտուղ ամէնքի համար է տալիս, ինչպէս երկինքը, որ իւր արևն ու անձրև անխափր է բաշխում:

Բայց երբ յաջողուում է սատանային փառասիրութեան և իշխանութեան զնով երկրպագու

դարձնել փառասէրին, սոսկալի է սատանայի արբանեակ փառասէրը, իշխանը: Նրա մշտավառ հնոցում այրուում է աշխարհը, աշխատանքը, սէրը, արդարութիւնը, սրբութիւնը լոկ նրա համար, որ Ներոնը կենդանի մարդկանցից լուցեալ ջահերով զուարճանայ:

Մեր կեանքն իշխանասէրներով և փառասէրներով լի է. ընկերվարական իւրաքանչիւր խումբ իւր իշխանը, իւր դեկավարը, իւր թագաւորն ունի. ընտանիքն՝ իւր իշխանը, գասակարգերն՝ իրենց գլուխը, կուսակցութիւններն իրենց կուսակցապետը, ընկերներն իրենց խումբապետը:

Սոքա ամէնքն էլ հասարակապետական են, համայնական, աշխատաւոր, հաւասարասէր... քանի դիրք չունին, բողոքող ոգի բռնութեան և անարդարութեան դէմ: Բայց երբ փառասիրութիւնը խօսում է և իրենց սրտի մէջ, երբ իշխանութեան դեկն իրենց բռան մէջն է ամփոփւում, երբ Սատանան խոստանում է նրանց իւր թագաւորութիւնը, երեկուայ հասարակապետական Նապօլէօնը կանգնում ու սուսերամերկ կանչում է իրեն համար՝ «Կեցցէ կայսր»:

Օրինակները շատ են. կեանքի անողոք ձեռքը հետզհետէ վարագոյրներ է բաց անում:

Այս ամէնը յառաջ է գալիս նրանից, որ անհատները հոգեպէս բարձր չեն, բարոյապէս տկար են. իսկ այդպիսի անհատներից կազմուած համայնքը ոչ մի բարձր դադափար իրականացնել

էարող չէ թէկուզ ամենալաւ արտաքին օրէնք-ներով:

Հացի, եսականութեան, փառասիրութեան գայթակղութիւնը մարդկային չարեաց աղբիւրն է և դուռը դէպի անգունդ, դէպի սանդարամետ: Իրանցից փրկուելու միակ անշեղ ճանապարհն իւր խորհրդաւոր փորձութեամբ ցոյց է տուել անապատի սատանային յաղթող Ս. Աստուածը:

Հայ ժողովուրդը եթէ ուզում է ապրել և երջանիկ լինել, եթէ ուզում է ունենալ հալալ հաց, անբիծ փառք, բարի անուն, պատիւ, եթէ ձգտում է անասն ու անմահ լինել, եթէ ուզում է իւր հոգու մէջ բուն դնեն գեղասիրութեան, բանաստեղծութեան հողին, եթէ ուզում է անոյշ ցնորքներ, իգէալներ զրկել, նրանցով շնչել, նրանցով ապրել, Նա պիտի ծունկի գայ անապատի յաղթական Աստուծոյ առաջ, այլ ոչ սատանայի. Նա իւր փորձութեան ժամերում գայթակղութեան երեսն ի վեր պիտի նետէ արհամարհանքով. «Երթ յետս իմ, սատանայ»:

Ձգում եմ, շօշափում եմ, կարծես թէ մեր կեանքի միջնորդը խոնաւացել է թշուառների արցունքով, որոնք գայթակղութեան ճանապարհից յետ դառնալ են ուզում, նրանք անզխտակցաբար սրտնում են իրենց կորցրած հանգիստը, բարոյական արբեցութեան գինին թողնում է նրանց, նրանք կարօտում են մոռացուած, բայց միշտ հզօր, միշտ յաւիտենական մարդասէր Աստուծուն:

Հեռու չէ այն ժամը, երբ բարոյական թուլութիւնը տեղի պիտի տայ արիութեան. երբ ծայրայեղ գայթակղութիւնները իրենց գարշահոտութեամբ պիտի զգուեցնեն ամէնքին:

Յուսանք թէ մենք, եղբայրներ, շուտով կերթանք մեզ փորձութեան դասը տուած Աստուծոյ ճանապարհով. յուսանք թէ մեզ անաշխատ հացով, եսականութեամբ, փառասիրութեամբ խարոզ գայթակղութեան դէմ հոգու զինավառութեամբ կելնենք ու դէմ յանդիման կանգնելով ամօթահար կանենք նրան որոտալով. «Երթ յետս իմ, սատանայ»:




---

Ծանօթ. խօսուած է 1909 թ. փետր. 15<sup>ի</sup> Բագուի Ս. Լուսաւորիչ եկեղեցում: Նոյն իմաստով Շուշու Ս. Ամենափրկիչ եկեղեցում:

## Դ Ա Ր Ձ

«Զի այս որդի իմ մեռեալ էր և եկեաց, կորուսեալ էր և գտաւ» (Ղուկ. ԺԵ—24):

Տարակուսանքների մէջ ծփալով, մտքամոլոր, կանգնած նայում եմ կեանքի վրայ. նոր-նոր երևոյթներ շարան-շարան գալիս անցնում են առջևիցս, և՛ լաւ և՛ վատ, և՛ շահաւէտ և՛ վնասաբեր և՛ վեհ և՛ փժուռ:

Ի միջի այլոց ամպոտ աչքով, կրծքի հեքով եմ դիտում թէ ինչպէս մեր հոգեկան աշխարհի երկնակամարից իրար ետևից շատ աստղեր են թոթափում, իրենց տեղերում խաւար թողնելով:

Դրանք անպարան կանթեղներն են, կրօնի, հայրենասիրութեան և բարոյականութեան ջահերը, որ վառուում էին մեր հոգեկան աշխարհում և արդ մի տարօրինակ, ակն ու աղբիւրն անյայտ ուժգին հողմերով հանդշում են շատ կրծքերի մէջ:

Աչքս ներկայից կարելով՝ ծերունի անցեալի վրայ եմ ուղղում, որ տեսնեմ արդեօք նման երևոյթ կա՞յ նրա հարուստ ծոցում, նրա ճոխ թանգարանում. արդեօք կրօնն ու բարոյականութիւնը ժամանակաւոր բաներ են ըստ էութեան, հնանալ, մեռնել, ընկնել կարող են թէ ոչ: Եւ եթէ այո, միթէ՞ ամենայն կրօն, ամենամյն բարոյականութիւն:

Մտքիս առջև շարուում են հսկայական դա-  
զադներ. դրանք հնաւուրց կրօններն են դիակ-  
նացած, մէկ-մէկու ետեից մեռած, մէկ-մէկու  
քով շարուած, որպէս անփուտ մումիաներ ան-  
ցեալի թանգարանում:

Տեսնում եմ ահա Հնդկաստանում մեռնում  
է վեզաների կրօնը, փակոււմ կամ աւերոււմ  
նրա տաճարները. նրա աւերակների վրայ ժա-  
մանակի Մեծ Ողբն տանջանքի երկունքով ծնում  
է Բրահմինների կրօնը, կանգնում են Բրահմին-  
ների մեհեանները:

Աչքիս սուղև ծերանում, մեռնում է և այս  
երկրորդը. նրա փշրտուած բեկորների վրայ ար-  
ձանանում է հսկայ Բուդդան:

Մի այլ տեղ ես ողջունում եմ բնապաշ-  
տութեան կայտառ կրօնի ծնունդը. կանգնում  
երկնային կամարով ծածկած, բիւրաւոր աստղերի  
վառ կանթեղներով լուսաւոր Բնութեան Մեծ  
Տաճարի մէջ ու անդրանիկ մանուկ մարդկու-  
թեան հետ երկրպագում եմ արևին ու լուսնին,  
լերան ու անտառին, հրին ու ջրին, շանթ ու  
որոտին, ծառին ու ծաղկին, ծովին ու հովին:

Ես ներկայ եմ և նրա մահուանը. նրա ար-  
ձակած յետին շունչը հոգի տուաւ Ողբմպոսի և  
Պառնասի աստուածներին, Կրօնոս, Զեւս, Ապոդոն  
իրենց աստուածային բանակներով, տիեզերական  
ոյժերն իրենց ափերի մէջ ամփոփած՝ նոր կրօնի,  
նոր պաշտամունքի, նոր բարոյականութեան  
հիմքը դրին:

Ես հանդիսատես եմ նոյնպէս թէ ինչպէս Զեօի երկնաստղաց կառքն իւր ամպրոպային հրեղէն ձիերով երկնքից զլորուեցաւ, ընկաւ, ջախջախուեցաւ և հսկաների պաշտամունքը մեռելոց գերեզմանատանն ամփոփուեցաւ:

Այժմ ես Հայաստանումն եմ. երբ Միհր աստուածը իւր քնիցն արթնանալով Հայոց աշխարհի արևելեան լեռների ետեում, ամէն առաւօտ բռնկեալ վարդագոյն հրդեհի միջով անցնում, բարձրանում է երկնակամարը, ես նախնեաց վառած կրակների քովը կանգնած, որ նուիրում է Միհր աստուծուն, տաքանում եմ ու՝ ներքին կրօնական ջերմութեամբ ոգևորուած, երկրպագում նախնի Հայոց հին արև-Միհրին ու կրակին: Յերեկը կանգնում եմ հայ ուխտաւորների շարքում Անահիտ դիցուհու ոսկեձոյլ արձանի առաջ ու ծաղիկ նուիրում. իսկ լուսնկայ պայծառ գիշերներ, երբ երկնավառ կանթեղները լուսաւորում են Վահագնի և Աստղկայ սենեակները, ես հայ ժողովրդի հետ և իմ ազօթքներն եմ վերանաքում դէպի այն երկնային ջինջ ապարանքը:

Ես տեսնում եմ նոյնպէս թէ ինչպէս Միհրը մեռնում է ու միայն արևն է մնում նրա փոխարէն. կործանւում է Անահաի արձանը, ամպի պէս լողալով ցրւում Աստղկայ կապոյտ ապարանքը և այդ բոլորի վրայ, ինչպէս և յունական կործանուած մեհեանների վրայ յաղթական փայլով կանգնում է մի պարզ քառաթե, Քրիստոսի պանծալի Խաչը:

Այս բոլորից յետոյ կս ըմբռնում եմ թէ՛ երբ մի կրօնից բաժանւում են մարդիկ ու ազգեր, անկրօն չեն մնում, այլ մի աւերակ տաճարից դուրս գալով՝ մտնում են մի ուրիշ, նոր տաճար, մինչև որ վերջապէս մտնում են քրիստոնէական տաճարը:

Ուրեմն կրօնականը չի մեռնում մարդու մէջ, նրա հետ կապուած բարոյականը չի մեռնում, այլ փոխւում է:

Այժմ մի խնդիր է ծագում. երբ քրիստոնէայ մարդու մէջ հանդչում է կրօնը, ո՞ւր են դիմում մարդիկ: Ոչ մի տեղ. էլ չկայ մի նոր տաճար, ուր մարդիկ մտնեն. նրանց զլխի վերև կանգնած է բաց երկինքը, ո՞ր էլ ցուցում չի անում:

Բայց մի բան զգալի է. քրիստոնէական կրօնից երես դարձրած մարդիկ տենդոս հոգով աշխատում են կառուցանել բարոյականութեան մի նոր տաճար, որովհետև առանց բարոյականութեան, այսինքն առանց մարդկային յարաբերութիւնները բարւոքող ներքին, անգլիք օրէնքներէ կեանք չի կարող լինել: Եւ այդ բարոյական կառուցման նիւթերը վերցնում են նրանք և՛ հնից և՛ նորից և՛ մտքից և՛ գիտութիւնից:

Եւ քրիստոնէութիւնից սառչողները սրտում ալեկոծ բաղխումով շարժւում է մի խեղդող յոյզ, մտքումը մի հզօր տարակոյս թէ արդեօք հին բարոյական գաղափարները ցնորք չեն, քրիստոնէական աւանդական կարգերի տակ կանգնելն անմտութիւն չէ:

Յառաջ է գալիս խղճի մէջ մի մեծ ողբերգութիւն, որից յետոյ մարդն սկսում է կառուցանել արդի բարոյականութիւնը:

Տեսնենք այդ նոր կառուցած քրիստոնէական գաղափարներից զո՞ւրս է, առաւել գերազանց ու նո՞ր բան է, թէ Գրիստոնէութիւնը դարերի վերլուծեան է՞ն ամենէն ապահով հանդրուանն է, որ գրկում է թէ հին մարդուն, թէ նորին և թէ գալիք մարդկութիւնը, ուստի և նրանից հեռանալը ոչնչութեան մասնել ինքզինք կնշանակէ:

Թող ներուի ինձ այսօր, որ փոքր ինչ մթին խնդիրներ արծարծեմ, որովհետև ես այսօր ինկատի ունիմ աւելի քրիստոնէութիւնից պաղածներին, քան հաւատացեալներին, որոնց համար Գրիստոնէութեան վեհութիւնն ու սրբութիւնն ապացուցանելու հարկ չկայ:

Բարոյականութիւնը սոսկ սովորութիւն կամ նորաձեւութիւն չէ, այլ այն մեծ օրէնքը, որ մարդու հոգեկան աշխարհն է սահմանում:

Բարոյականութիւնը երեք կերպարանքով, երեք պատկերով է հանդէս գրւում. Ա. առողջ դատողութեան կամ մտքի բարոյականութիւն:

Այս տեսակի բարոյականութեան հեղինակներն ընդունում են թէ միայն մեր ցամաք միտքն է, մեր բանականութիւնն է, որ պիտի ղեկավարէ բարոյականութիւնը. իսկ միտքը գիտակցում է երկու բարիք միայն, առողջութիւն և հարստութիւն, որին պիտի ձգտի և որոնք հիմք են մնացեալ բոլոր վայելքների. և երկու չարիք՝ հիւան-

դուժիւն և աղքատութիւն, որոնցից խոյս պիտի տայ մարդը, որպէս մնացեալ բոլոր չարիքների աղբիւրից:

Այս տեսակ բարոյականութեան հիմնաքարը միայն ետականութիւնն է, անհատական կեանքը, կղզիացումն, որ ոչ մի առաքինութիւն չի ընդունում:

Երկրորդ տեսակի բարոյականութիւնը կոչւում է ըարեմտութեան ըարոյականութիւն. սա ընդունում է, որ մարդս հասարակական կեանքով ապրող էակ է, ուրեմն միայն մտքի բարոյականութեամբ ապրել չի կարող. նա իւր երջանկութիւնն ապահովելու համար պէտք է այլոց վրայ հոգս ունենայ, այսինքն որոշ չափով պիտի լինի գթոտ, մեծահոգի, ողորմած, բարի:

Այս տեսակի բարոյականութիւնը ի նկատի ունի դարձեալ ետականութիւնը, որին օգտուէտութեամբ ծառայեցնել է ուզում որոշ առաքինութիւններ: Սա պարտականութեան բարոյականութիւնն է:

Այս երկու տեսակի բարոյականութեան կառուցումները սահմանափակ են, միակողմանի և անբաւարար:

Թերութիւնը յառաջ է դալիս նրանից, որ մարդիկ սխալ բմբռնումով մեծ դեր են յատկացում խելքին և մոռանում են հողեկան միւս կարողութիւնները, որոնք խելքից առաւել ընդարձակ են և դեկավար:

Մարդկային միտքը, խելքը չկար, երբ նա

ապրում էր միայն բնագլուխ: Բնագլուխը չի գիտակցում, բայց ղեկավարում է մարդուն ուղիղ ճանապարհով, ճիշտ այն կոյրի նման, որ գնում է մթուփեան մէջ, բայց համոզուած է թէ ուղիղ է գնում:

Առողջ բնագլուխը մարդուն յառաջ տանելով փորձառութեան վարժութեամբ հետզհետէ կատարելագործուել է, մինչև որ ուղիղը զարգացել է և բնագլուխին գործողութիւնները մի մասն սկսել է գիտակցուիլ: Այս գիտութեան խօսքն է, նրա վկայութիւնը:

Սակայն մտքի զարգացումով բնագլուխը երբէք չի դադարում մարդու մէջ: Միտքը կարող է գիտակցել միայն այն փորձառութիւնները, այն երևոյթները, որ իրեն մատչելի են. իսկ նրան մատչելի երևոյթները՝ համեմատելով այն ամէն երևոյթները հետ, որոնք մթին են, անծանօթ, շատ քիչ են, չնչին:

Մտքով հպարտ երիտասարդին և պարծենկոտ գիտնականին սպառնում է միշտ ծերութեան օրերում մի դառն խոստովանութիւն թէ իրենք ոչինչ չգիտեն, իրենց գիտեցածը չնչին է այն ամէնի համեմատութեամբ ինչ որ չգիտեն:

Առողջ բնագլուխը մնում է զարձեալ առաւել լայն շրջանով ղեկավար ոյժ մեր կեանքի, մեր նիստ ու կացի, մեր բարոյականութեան համար:

Մի երրորդ հոգեկան կարողութիւն, որ իւր մէջն ամփոփում է և՛ բնագլուխ և՛ միտքը և ղեկավարում ու զարգացնում է, այն երեւակայու-

Թիւնն է, միտտիքական խելքը:

Չկայ մի դրական գիտութիւն, որի հիմքը երևակայութիւնը չլինի. մարդս նախ երևակայում է, ապա սկսում է մտքով քննադատել երևակայածի այն մասը որ ըմբռնելի է: Երևակայութիւնը միշտ առաջագնաց է. նա մտքի քաջակերութիւնն է, միտքը սրող յեսանն է, մտքի լապտերը վառող ձեռքն է:

Եթէ երևակայութիւնը չլինէր, միտքը պիտի իւր նեղ, եսական, առօրեայ շրջանիցը, իւր փոքրիկ գիւղիցը դուրս չգար. գիտութիւնը պիտի իւր սահմանափակութեան մէջը քարանար:

Երևակայութիւնը անսահման ազատութեամբ բաց է անում մեր առջև այն ճանապարհը, որով մարդ յառաջ է գնում, ձգտում է: Նա տալիս է մեզ իդէալներ, ամբողջ գեղարուեստի վրայ, բանաստեղծութեան վրայ, նկարչութեան վրայ, քանդակագործութեան վրայ, ճարտարագետութեան վրայ երևակայութիւնն է թագաւորում:

Երևակայութիւնը ղեկավարում է նաև բարոյականութիւնը. նա ընդգրկում է իւր մէջ առողջ դատողութեան սահմանափակ բարոյականութիւնը այն չափով, որ չափով շահաւէտ է նա անձին. նա ընդգրկում է և բարեմտութեան բարոյականութիւնը, սակայն չի գոհանում նրա սահմանափակ գաղափարներով, այն է մեծահոգութեամբ, զթութեամբ, բարութեամբ, արդարութեամբ, որ չափով նրանք գործադրելի են օգտակարութեան տեսակետով, այլ նա այդ

առաքինութիւնները իդէալականացնում է, հաս-  
ցնում բացարձակ սիրոյ, այն աստիճանի, որ  
հզօր մարդը պատրաստ է հերոսանալ, մեռնել և  
աստուածանալ այդ առաքինութիւնների համար,  
որոնք պէտք են կեանքին, որոնց ձգտում է աշ-  
խարհը զանազան ճանապարհով:

Իսկ քրիստոնէական կրօնը ղեկավարում է  
Մեծ երևակայութեան բարոյականութիւնը, հրա-  
ւիրում է զէպի իդէալներ, զէպի գերագոյն գա-  
ղափարներ և ստեղծում է հոգևոր կեանք, զար-  
գարում արտաքին մարդուն, ներքին մարդով:

Մըդ, հասկանալի է ուրեմն թէ հայ քրիս-  
տոնէական եկեղեցուց պաղած մարդիկ, նրա  
սուրբ տաճարից ելնել կամենալով, իրենց երևա-  
կայած բարոյականութեան տաճարը չեն մտնում,  
որովհետև նրանց երևակայածը իւր սուելիով  
քրիստոնէական եկեղեցու մէջն է և ոչ երբէք  
այլ տեղ:

Գնում էինք մէկ անգամ երկու հոգով ձմրան  
սոսկալի բուքերուն Արաղած սարի լանջովը.  
Իջևանեցինք մի գիւղ, հանգիստ առանք խեղդող  
բուքից և շարունակեցինք մեր ճամբան: Չորս  
ժամ շարունակ գնում էինք. մեր շուրջը մութ,  
ճանապարհներն անհարթ, ձիւնով լի ձորեր, ուր  
ընկնում էինք, բարձունքներից դահավիժելով ու  
տանջանքներով ելնում, մերթ մենք ձիերին,  
մերթ ձիերը մեզ կորցնելով: Կարկամել էին մեր  
ձեռքերն, ընդարմացել մեր մարմինը, յուսահա-  
սութեան սև ամպն իջել էր մեր հոգու վրայ:

Մահը տեսնում էինք մեր աչքով:

Յանկարծ ձիերը մեզ մի գիւղ բերին և կանգ առան մի տան առաջ: Մեզ՝ լեղուակապ մարդկանցս տուն տարան և՛ սվ զարմանք, այդ այն տունն էր, այն բարի մարդիկ, որոնց գըրկում հիւր էինք 4 ժամ առաջ:

Պարզուեցաւ որ մենք՝ կարծելով թէ կէտ նպատակի ընտրած գիւղն ենք գնում, ուր ապահովութիւն գանելու յոյս էինք տածում, իրօք շարունակ շրջել ենք նոյն գիւղի բոլորտիք, միտն ու բուքերու մէջ, որպէս զի մեր փրկութիւնը էլի նոյն գիւղում, նոյն հիւրընկալ յարկի տակը գտնենք:

Համոզուած եմ թէ այն մարդիկ, որոնք քրիստոնէական եկեղեցու սրբազան յարկը թողել և գնում են ուրիշ յարկ որոնելու և գտնելու, լոկ բուքերու և խաւարի մէջն են շրջում, այն էլ եկեղեցու շուրջը. նրանք կամ պիտի խեղդուին մոլորեցնող գաղափարների բուքով կամ վերստին իրենց հիւրընկալ սրբազան յարկը պիտի դառնան, ծանր, տանջող բայց արիական զրգջումով:

Նրանց վիճակն ինձ յիշեցնում է այսօրուայ ս. աւետարանի առակն «Անառակի»:

Մի հօր երկու որդիներէց կըտեսերը մոլորութեամբ պաղեցաւ իւր հայրական շէն, բարելից անից. սպանեց յարգանքն ու երախտագիտութիւնն իւր մէջ գէպի գթոս հայրը, կամեցաւ թռչնի ազատութեամբ ասլրիլ, օտար, հեռու

աշխարհներէից եկած անոյշ ձայները մօտիկից լսել ու երջանիկ լինել:

— Հայր, զիմեց նա իւր հօրը, քո տունն ինձ համար բանտ է երևում, քո քնքոյշ հսկողութիւնն ինձ վրայ՝ կաշկանդող շղթայ, քո սիրոյ ջերմութիւնն՝ ինձ այրող կրակ: Ինձ հասանելի բաժին ժառանգութիւնը տուր, ես ուզում եմ օտար աշխարհ գնալ, երջանիկ օտարների տանն ապրել, նրանց ազատութիւնը վայելել:

Ճշմարիտ սէրը հոգով ցաւիլ, ասնջուիլ զիտէ, բայց մերժել չզիտէ. և սիրող հայրը՝ արցունքն աչքերին, առաւ փոքր որդուն հասանելի ժառանգութիւնն ու բաց թողեց:

Հայրենիքի, հայրենի ասն ճրագն իւր հոգումէջ հանգցրած որդին հեռու, օտար աշխարհի ճամբէն բռնեց ու գնաց:

Նա իւր բնակութիւնը հաստատեց մի նոր աշխարհում: Օտար անբարոյ երիտասարդները շուտով իմացան թէ եկուորը հարուստ երիտասարդ է, ծանօթացան նրան, ընկերացան, սկսան յարգանքների, սիրոյ արտայայտութիւններ անել, եղբայրութեան դաշինք կնքել, մինչև տիրեցին նրա խաբուած սրտին, մինչև որ մեղի, անառակ կեանքի մէջ մաշուեցաւ նրա հարստութիւնը, նա ինքն իսկ:

Աղքատութեան դառնութիւնը լիուլի ճաշակելիս՝ ոչ ոք մնաց նրան ծանօթ կամ բարեկամ. նա դարձաւ զուռ ընկած մութացիկ, ծաղր ու ծանախի, նշաւակութեան առարկայ: Նրա

ճակտին «անառակ» անարգանքը զրոշմեցին, որպէս հայրենի յարկն ուրացած, որպէս հայրենական ժառանգութիւն ու շնորհք վատնած ոք: Նրա աղքատութիւնը սովի փոխուեցաւ և օտար աշխարհի ամենէն զթոտ մարդը միայն նա եղաւ, որ արհամարհանքով զրկեց նրան իւր ազարակը ամենէն անարգ պաշտօնը կատարելու, խոզեր արածեցնելու. խոզեր, որ՝ իբրև ապականասէր կենդանիներ, ախտաւորութեան են հոմանիշ:

Եւ հայրենի տան սիրասուն որդին, օտար աշխարհում միայն խոզարած դարձաւ:

Այն երկրի հացը սակաւ էր և խոզարածն ստիպուած էր խոզերի կերած բոյս արմատներով փրկել իւր կեանքը, այն էլ չէին թողնում: Կատարեալ էր տանջանքը, կատարեալ պատիժը, կատարեալ յուսահատութիւնը:

Որպէս օձահար սթափուեցաւ նա մոլորութեան թմրութիւնից, զղջման հուր արտասուքն աչքերին նա հեկեկանքով գետինն ընկաւ, նետահար, թռչնի նման թփռտալով ու կանչեց աղեխարշ կանչով. «Ո՛հ դառն մոլորութեան. հօրս բարեկից տանը որքան հաց ուտող մշակներ կան և ես այս ցուրտ, անազորոյն օտարութեան մէջ սովամահ եմ մեռնում: Կգառնամ մեր տուն, բարի հօրս ոտքերը կթանամ արցունքովս ու կասեմ «հայր, մեղայ յերկինս և առաջի քո. ես էլ քեզ որդի կոչուելու արժանի չեմ, գոնէ քո մշակներիդ մէջն ինձ տեղ տուր, սօ՛հ, հայր, բարի հայր»:

Եւ նա տուն դարձաւ: Երբ հայրը հեռուից տեսաւ որդուն, բազկատարած ընդառաջ գնաց, գրկեց նրան սիրառատ գրկով, ջերմ համբոյրով ջնջեց նրա ճակատից անառակութեան դրոշմը և հրաման տուաւ իւր ծառաներին. «Ծառաներ, հանեցէք օտարների հագուցած այս ցնցոտին իմ ազիզ որդու վրայից, բերէք վայելուչ հագուստ ու հագցրէք. կօշիկներ բերէք որդուս բոբիկ ոտքերի համար, մատանի բերէք մատը գրէք, գեր եզը գենեցէք որ ուտենք, խմենք և ուրախ լինինք, որովհետեւ այս որդիս կորած էր՝ գանուեցաւ, մեռած էր՝ կենդանացաւ. «Ձի այս որդի իմ մեռեալ էր և եկեաց, կորուսեալ էր և գտաւ»:

Հեռուից եկած թովիչ ձայներն, ազգ հարազատ, քեզ հայրենի տնից դուրս քաշեցին. օտարութեան ճամբան ես բռնել, գգնչ, այդ ձայներն օձերի թովիչ շշուկն են, որ քեզ հայրենի դրախտից դուրս են հրապուրում: Մի գնար, տուն դարձիր:

Գեղեցկութիւն, վայելք, անթառամ սէր որոնելու համար, հայ երիտասարդ եղբայր, թողել հայրենի ծաղկանոց, թողել մեր հոգարտ լեռներու լանջը զարդարող շուշանն ու ընկել ես օտար աշխարհ սիրոյ վարդ ես որոնում:

Թունտ է օտար վարդ, շղարուած քեզ համար օտար գեղեցկութիւն: Քանի ցաւով չի լայլուել մարմինդ, քանի հոգիդ զղջման հուրը չի բռնկել, թնդ օտարութիւն, թնդ ու տուն դարձիր:

Դարերն են վկայ թէ հայ կնոջ զէմքի վրայ համեստութեան մշտակարմիր ալ վարդն է ծաղկել: Զգոյշ, քոյր իմ, մեր սէզ երիտասարդ լեռներից այն կողմ մի անցնիր, նրանց ետևում օտար անասլատն է տարածուում: Անասլատի խորշակը կհալի քո պայծառ զէմքին, համեստութիւնը կխամբի, կկորչի բոյրն ու հրապոյր և կսկծազին կզղջաս:

Քոյր իմ, մեր տան շէմքից մի հեռանար, եղբօրդ ձայնը քեզ է կանչում տուն դարձիր:

Քանի քո հղօր բազուկը, հայ կտրիձ, երդուեալ պաշտպան էր քո հարազատ զրկեալին, քանի քո արիւն ու քրտունք հոսում էին հայրենի հողի վրայ, այն արիւնից «աղբբանց արուն» ծաղիկն էր ծաղկում մեր դաշտերում. քո անմահութիւնն այն ծաղկիցն էինք հոտոտում, իսկ օտարներ հերոս անուն տուն քեզ:

Բայց երբ հէզ հայրենիքի պաշտպանութեան համար գօսացաւ քո ձեռք և օտար՝ նոյն իսկ մեզ տանջողների շարքը մտար այլոց վիճակը բարւոքելու անունով, օտար աւագներու մէջ անհեռ ծծուեցաւ քո վարդագոյն արիւն և ի տրիտուր քեզ «աւագակ» քեզ «մարդասպան» կոչեցին, ու՛ բարիքներ բաժանելու ժամանակ, քեզ լոկ խոզեր պիտի տան արածելու: Քո հիւանդ ոչխար քո բուժիչ ձեռքին է կարօտ, օտար գազանը՝ քո օգնութեան անկարօտ:

Հերոս եղբայր, սրաիդ ձայնին հետևիր, պատիրն ու կեղծը Դու շուտ թող, տուն դարձիր:

Ո՞վ քեզ ուսոյց բանտի ճամբան, հայ տղայ.  
հայն աւագակ, հայն անպատի՛ւ, հայը մահա-  
պանրա. քա՛ւ լիցի: Մոլորութեան այդ ճամբէդ  
թող, հայ տղայ, նա բանտով ու կախաղանով է  
վերջանում:

Սրտի ձայնը սիրո՞ւ հայութեան քեզ կան-  
չում է տուն դարձիր. սգւոր մայրդ, արցունքն  
աչքին, վշտից պատառուած արնազանգ կրծքով  
քեզ խնդրում է տուն դարձիր:

Քեզ խաբեցին, հայ պատանի, թէ հայ լեզուն  
անոյշ աւագով չէ հնչում. գողտրիկ լեզուդ գող-  
ցան օտարներն ու տեղն օտար թոթովանք դրին:

Մոլորութեան այդ չար ճամբան Դու շուտ  
թող. լեզուն անոյշ, խօսքը մեղուշ է հայի: Հայ  
բարբառը քեզ կանչում է տուն դարձիր:

Երբ քեզ տեսայ մեր հայրենի հողը հերկե-  
լիս, հայ աշխատաւոր, ինձ այնպէս էր թուում  
թէ Դու աղօթք ես անում, քո ճակտի ազնիւ  
քրտունքը ամենասուրբ պատարագն էր, որ գո-  
լորշիանալով եթերքին էր խառնւում, որպէս  
խունկ անուշութեան:

Թողիր հողը, թողիր պարտէզն անմշակ ու  
բանուոր դարձար, բանուորական դասակարգ  
կազմելով: Հայ ազգի մեծ ընտանիք դասակարգ  
չէ ճանաչում: Թուում է ինձ թէ սխալուեցար,  
օտար ճամբայ բռնեցիր: Մեր ծաղկավառ սիրուն  
երկիր, հողն անոյշ քեզ կանչում է տուն դարձիր:

Ազատ չմնացիր օտար շնչից և Դու հայ  
հարուստ, ժանգ մետաղն իւր ծանրութեամբ խիստ

շատ ճնշեց քո ազնիւ սիրտ և զու հայ աշխատաւորի սէրը ոսկու փայլով փոխեցիր:

Չէ, հայ եղբայր, շարժէ սիրտդ, վառէ գութը սրտիդ մէջ, հալուի ոսկին, հոսի, զնա այն տեղից: Աշխատաւոր հայ գեղջուկը քեզ խնդրում է տուն դարձիր:

Հայ քրիստոնեայ ազատ եկեղեցին իւր մարտը վիճակի մէջ մարմնացումն է ամենամեծ, աւետարանական ամենավսեմ գաղափարներին: Նա մարմնացումն է նաև հայ լաւագոյն զգացմունքներին և բարոյականութեան: Նրանք հիւսուած, նրանք իրար փաթաթուած են որպէս ճիւղն ու տերև:

Հայկական սիրող ոգին, վարսերն արձակ, աչքն արցունքով, նրա շէմքի վրայ կանգնած ձեզ է սպասում, որ պանդխտութիւնից յետ դառնաք, որ ընդառաջ ելնէ, որ զրկէ համբուրէ ու կանչէ անոյշ կանչով. «Որդիս մեռած էր՝ կենդանացաւ, կորսուած էր գտնուեցաւ. մատանի բերէք, նոր հազուատ բերէք, զենէք պարարակ եզր»:

Գիշեր է, անթափանց խաւար, իսկ մենք մեր անից, մեր հողից մեր կեանքից հեռու: Զգոյշ, իմ հարազատ ազգ, այն խաւարի մէջ յոշոտող գազաններ կան, շտապիր, թիկունքդ այն կողմ՝ զէմքդ մեզի տուն դարձիր\*:

\*) Ծանօթ. խօսուած է Բագուի Հայոց Ս. Լուսաւորիչ եկեղեցում 1909 թ. փետր. 22. Նոյն խմաստով Շուշու Մեղրեցոց եկեղեցում:

## ԱՐԹՆՈՒԹԻԻՆ

«Արթուն կացէք և յաղօթս կացէք, զի մի մտջլք  
ի փորձութիւն» (Աւ. Մարկ. ԺԴ—38):

Մտահոգութեան տաղնապի դիշերն էր այն:  
Թանձր խաւարն իջել ու վրանաձև փոռել  
էր Գեթսեմանի պարտէզների վրայ Ջիթենեաց  
սարի ստորոտում:

Նա իւր աշակերտներից չորսին հետն առ-  
նելով մտաւ այգին. խիտ ծառերի խմբի մէջ  
թողեց նրանց պատուիրելով՝ արթուն մնացէք և  
աղօթք արէք, որ փորձութեան մէջ չընկնիք,  
չլքանիք:

Իսկ ինքը մի քարընկեց հեռու դնաց ու բա-  
ցարձակ առանձնութեան մէջ ծուկ իջաւ, ա-  
ղօթքի կանգնեցաւ:

Աստուածային աչքերն ուղղել էր նա դէպի  
միջին երկինքը. նա յուսադրող, քաջալերող ճա-  
ռագայթ էր որոնում: Նրա սրտի մէջ անեղ կռիւ  
կար. կռում էին մարդն ու Աստուած, մահն ու  
կեանքը:

Անխուսափելի մահուան ժանտ պտակերի  
դիմաց նա՝ իբրև մարդ, սարսում, դողում էր և  
կանչում երկնքի երեսն ի վեր՝ Հայր, Հայր, եթէ  
կարելի է մահու այս բաժակը հեռացրու ինձից:  
Իբրև Աստուած՝ քաջալերում, ոչ այնպէս, ինչ-

պէս ես եմ կամենում, հայր, այլ որպէս Գուէ Ոյժ տուր Ինձ, հայր, զօրացրու իմ մարդկային տկարութիւնը, որ փորձութեանը յաղթեմ:

Նրա ճակտից տաքնապի քրտունքը ոլտոն, ոլտոն հոսում էր և թանում Գեթսեմանի պարտէզն ու հողեր:

Երկնքի քաջալերութեան կարօտ լինելով, Ինքն էլ աշակերտների աստուածն ու քաջալերութիւնն էր. երեք անգամ ընդհատեց աղօթքը, երեք անգամ դարձաւ աշակերտների մօտ, որոնց յոգնած աչքերը քնի ծանրութեամբ էին գոցւում. երեք անգամ պատուիրեց արթուն կացէք, վտանգի, մահու գիշերն է, արթուն կացէք, հսկեցէք և աղօթքով ոյժ առէք, որ փորձութեան մէջ չընկնիք, չսարսափեք, չլքանիք, չկտրչիք հոգով:

Այդ պահուն պարտիզի ծայրում, ծառերի մէջ թազնուած էր մարգասապանների խումբը Յուդայի գլխաւորութեամբ: Նրանք գալիս էին գաղտագողի, գալիս էին աւագակների պէս գինուած սրով ու փայտով, գալիս էին օձի նման սողալով, թոյնը բերաններումը թագցրած:

Յիսուս վերջացրեց իւր աղօթքը. աղօթեց մարդու պէս, երաւ Աստուծոյ պէս: Նա ճշմարտութեան յաղթանակի համար, թշուառ մարդկութեան փրկութեան համար մահն ընտրեց. Նա վճռեց խմել երկնքից առաքուած մահու բաժակը: Իսկ աշակերտները քնած էին. չկարողացան արթուն կենալ և փորձութեան մէջ ընկան: Երբ կալանաւորեցին Յիսուսին նրանք թողին ու փա-

խան և նոյն իսկ ուրացան Նրան:

Հերոսական մահը կնքուած գաղանիքների և խորհուրդների կնիքն է կոտորում: Յիսուսի մահը ցնցեց Նրա աշակերտներին, լուսարանեց Նրա վարդապետութիւնը: Լմբռնեցին առաքեալներն ու հաւատացեալները թէ աւետարանը, Քրիստոսի աւանդած կրօնը մարդկութեան տաւապեալ բաժնի կրօնն է, Աստուածային օրէնքների՝ սիրոյ, հաւասարութեան, ազատութեան, յուսոյ, հաւատի, զթութեան, համեստութեան աշխատասիրութեան թագաւորութիւնն է, կեանքն է, որոնց ժողովածուն, զիրքը մարդու սիրտն է: Լմբռնեցին թէ քրիստոնէութիւնը բունն, անգէն բողոք է անիրաւ իշխանութեան ու պետութեան դէմ, կեղծիքի և բռնութեան դէմ, անհաւասարութեան և ատելութեան դէմ, անգթութեան և չարիքի դէմ:

Եւ քրիստոնէութեան քարոզիչներն ու հաւատացեալներն՝ երկնքի թագաւորութեան զինուոր գրուելով, երկրի վրայ զինուեցան, գօտևորուեցան Յիսուսի տուած կենդանի խօսքի շողշողուն սրով և մարտի դաշտն ելան:

Երկնքի արքայութեան համար կռուող զինուորների մի փայլուն բանակ դարերից ի վեր յաղթական պատերազմ էր մղում Հայոց աշխարհում Հայոց ազգային եկեղեցու անառիկ ամբողջում զիրք բռնած:

Քրիստոսի զինուորութեան զլիսի մէջ եռում էր մտքի աշխատանքը, սրտի մէջ վառուում

հուրը ոգևորութեան, տիրում էր հովուական յանդուգն անձնուիրական արիութիւն և առաքելական համարձակութիւն:

Քրիստոսի զինուորը ձախորդ, չարիքով լի իրականութեան հետ հաշտուել չի կարող. նա ծառայ լինել չի կարող ոչ մի կուսակցութեան, ոչ մի իշխանութեան, ոչ մի բռնութեան: Նա սղատ, համարձակ, իշխանական խօսքի տէրն է և գառաւորը:

Չարչարանքների և ոչ մի տեսակը չկաշկանդեց Լուսաւորչի անան լեզուն, ուստի շանթեր էր տեղում նա սէդ Տրդատ արքայի երեսին, նրա անօրինութեանց համար:

Ոչ մահու սպառնալիք, ոչ ինքը մահը կարողացան շղթայել ներսէս Մեծի, Յուսիկ կաթողիկոսի, Պարթև Սահակի յանդիմանիչ լեզուն, որով առաքելական համարձակութեամբ խարազանում էին նրանք Արտաշիսի, Արշակի, Պապի արքայական անօրէնութիւնները:

Ոչ հալածանքը, ոչ քաղցը, ոչ անարգանքը զսպեցին Սորենացու, Փարպեցու և ընկերների լեզուն սգէտ հոգևորականների, «ստախօս արեզանների» և խաւար հոգիների դէմ:

Ոչ մի սպառնալիք կարող եղաւ Սորասպատի նահատակների լեզուն լեցնել, որ ուզողւած էր պարսից անօրէն թագաւորի դէմ, մինչև որ նահատակութեամբ պսակուեցան:

Երբ աշխարհի անիրաւութեան դէմ կռուելու զէնքը վար էին դնում հայ եկեղեցականները,

անճնատուր էին լինում աւետարանական և դի-  
տական լոյսի տարածման, խնամում էին որդե-  
րին, անկեալներին, սփոփում թշուառներին,  
ուսուցանում մանուկներին, մխիթարում լքեալ-  
ներին, փարատում սուղը սգաւորի, քարոզում  
կեանքի խօսքն երկնային:

Ահա այս էր քրիստոնեայ Հայոց եկեղեցին:

Այդ եկեղեցին ես այժմ որոնում եմ. որո-  
նում եմ զգացմունքի թափով, մտքի վառած  
լապտերով, խղճի լուսաւորութեամբ, որոնում եմ  
ու չեմ գտնում:

Քրիստոսի կենդանի եկեղեցու մէջ կեանքը  
պակսել է, արիւնը նրա երակներում թանճրա-  
նում, շունչը կրծքի մէջ թուլանում, գործունէ-  
ութիւնը մեռնում, ստեղծագործութիւնը՝ քարա-  
նում:

Մահու տագնապի գիշերը հայ ազգին վրայ է  
հասել. իսկ սւր կն առաքեալները, ցոյց տուէք  
նրանց:

Ո՞ւր էք Դուք Զօրագլուխ Քրիստոսի զին-  
ուորներ, սիրոյ սուրհանդակներ, խաղաղութեան  
հրեշտակներ, գթութեան եղբայրներ:

Քնած են, ազօթքի և հսկման ժամին քնած...

Քնած ենք մենք. չկարողացանք արթուն  
մնալ, գիշերուայ խաւար պահուն, երբ տառա-  
պեալ հայ ազգը տաղնապով ազօթում էր, երբ  
նրա վրայ աշխարհի մոլորութեան մութ անտա-  
ւից գաւազիք սպանիչներն էին դալիս: Քնած  
էինք, երբ սաստանան որոմն ցանեց մեր արալի մէջ:

Տեսայ օտար գառնազգեստ դայլեր մեր երկրի սրտում, նոյն իսկ Մայր Աթոռի շուրջը, աչքի առաջ՝ անդրանիկ քրիստոնեայ հայ ժողովրդի մէջ իբր քրիստոնէութիւն քարոզելիս: Բայց սէր էր հայ եկեղեցականը, հայ հովիւը. չտեսայ:

Տեսայ հայ ազգի փոքրիկ միութիւնը կուսակցական նեղ ասեւրութեամբ փեռեկուած: Բայց սէր էր միութեան կապ հայ հոգեւորականը. չտեսայ:

Տեսայ եղբայրասպան պատերազմը հայ մուրեալ կտորիճների մէջ. Կայէնի ձեռքը Աբէլ եղբօր արիւնն էր վօթում: Բայց սէր էր հայ հոգեւորականի ձայնը, որ հաշիւ առնէր. «Կայէն, Կայէն սնիծեալ, սէր է եղբայրդ, Աբէլի արիւնը բողոքում է», չտեսայ:

Տեսայ դաւադիր օտարի թոյնով կարկամած, բարբարոսութեան հուր ու սրով ընկած հազարաւոր հայ նոր նահաաակների արիւնագանգ զիակներ: Բայց սէր էր հայ հոգեւորականը կամ կենդանի քաջալերելիս կամ զիակնացած իւր ժողովրդի հետ, չտեսայ:

Տեսայ տարազրութեան ճամբէն բռնած շղթայազարկ հէզ հային, որին որպէս ոչխարի հայրենիքից դուրս էին վաարում: Որոնեցի նրանց խմբում հայ հոգեւորին, քեզ տեսայ:

Տեսայ մռայլ բանդերի անլոյս ծոցում հայ ծաղիկ՝ բայց մոլորեալ երիտասարդներ էին թուամում վաղաժամ: Նրանք կարօտ էին կենդանի խօսքի, ուղղութեան, սիրտիանքի. Կրօնն այնտեղ

պիտի փայլէր հայ հոգևորի կայծակնասփիւռ շրթունքով: Բայց ուր էր հայ հոգևորը, շատ նայեցի, չտեսայ:

Մարդասիրական գործեր տեսայ Հայոց մէջ, որբանոցներ, անկելանոց, անհաց աղքատ, դրամագուրկ ճամբորդ, քաղցած այրի, օգնող ձեռքեր: Քաղաքակրթական գործեր տեսայ Հայոց մէջ, գրքի հրատարակութիւն, հոգերի մշակութիւն, հիւանդանոց, արհեստանոց, վարժարաններ ու շատ քրիստոնէական գործեր, աշխատաւորները շարքերում շատ որոնեցի հայ հոգևորին, քիչ տեսայ:

Ա՛րդ, եթէ Հայոց եկեղեցին, հայ հոգևորը աղքատների աւետարանիչը չէ, բեկուած սրտերը վերաշինող բըռտըր չէ, սգաւորի մխիթարիչը չէ, լքեալի յոյսը չէ, գերիների ազատութեան աւետաբերը չէ, գրկեալի պահապան հրեշտակը չէ, գեղարուեստի ոգևորութիւնը չէ, պատանիների դաստիարակը չէ, որբերի հայրը չէ, այրիների խնամակալը չէ, աշխատաւորի այրող քրտունքը սրբող գթութեան ձեռքը չէ, արդարութեան բարեկամը չէ, ճշմարտութեան քարոզը չէ, իւր ժողովրդի պահապան հրեշտակը չէ, բարբարոսութեան դէմ շողացող հրեղէն սուրը չէ,—Ուրեմն ի՞նչ է:

Մի աւելորդ այլանդակող միս քրիստոնէական եկեղեցու և հայ ազգի պայծառ ճակտին բսած, դանակով կտրելու և կրակի մէջ ձգելու արժանի: Մի շարաւալից խոց աւետարանի մա-

քուր, սուրբ մարմնի վրայ: Մի թմրած, մրափն աչքերը կոխած զիշերապահ, որի վրայից գողերը քայլելով անցնում ու տուն են մտնում:

Բայց ես տեսայ հայ հողերին, նա կայ.

Ես տեսայ նրան Աննայի և Կայխափայի դատաւորական աթոռի վրայ նստած, սուրը ներսը, խաչը դուրսը կախ արած դատ անելիս. իսկ դատարանի զբանը որքն ու այրին, զրկեալն ու արդարը ձեռն ի ծնօտ, աչքն արցունքոտ աւետարանից այս կտորն էին կարդում. «Մի քաղաքում մի դատաւոր կար, որ մարդկանցից չէր ամաչում, Աստուծոցն էլ չէր վախենում...»

Ես տեսայ նրան նախշած կրծքով Պիղատոսի տան առջև խաչահանների հետ կրակի վրայ տաքանալիս, երբ ցրտահար արնլուիկ Յիսուսին քարշ էին տալիս քարերի վրայով:

Ես տեսայ կենդանի մեռելներին մեռել թաղելիս...

Բայց ես շատ յառաջ գնացի... առաքելական քաջութիւնը չէ որ հոսում է երակներէս մէջ, այլ այժմեան հողերի երկշտուութիւնը: Յետագարձ շարժումն. ո՛չ, ո՛չ, ես չտեսայ, չեմ տեսել հայ հողերին. միայն տեսայ, որ նա քնած էր ծառի տակին:

Իսկ Դու անպարտ այս անկման մէջ, իմ հայ ազգ:

Ո՛չ, Դու այն ծովակն ես, որի մէջ անդրադառնում է հողերականի պատկերը. եթէ քո ջրերը պղտորուած չլինէին հողերականի պատ-

կերը նրանց ծոցում պայծառ կերևար:

Դ՛նւ, մեր գերագոյն Դատաւոր արդար, երես  
դարձուցիր մեզնից. Դ՛նւ, մեր խղճի ձայն, լու-  
ցիր. Դո՛ւ՛ մեր սգևորութեան աղբիւր, ցամա-  
քեցար, Դո՛ւ՛ մեր աչքերի յոյս ու լոյս, խաւա-  
րեցար, Դո՛ւ՛ մեր հաւատի ջերմութիւն՝ պաղե-  
ցար, Դո՛ւ՛ մեզ քաջալերող ձեռք, դօսացար, Դո՛ւ՛  
մեզ ստնտող մայր, սաինքներդ ցամաքեցրիր  
մեզ համար:

Երբ առաքեալները քնած էին, ես քեզ չտե-  
սայ տագնապի քրտունքով աղօթելիս, ոյժ առ-  
նելիս վտանգի զիշերուան պահուն: Դու ինքդ  
քնած մնացիր, Դու չեկար քո արթնութեամբդ  
մեզ արթնցնելու. Դու քո սառն անտարբերու-  
թեամբ քարացրիր եկեղեցին:

Քեզ շատ տեղ ես տեսայ, տեսայ ինչպէս  
հոգևորի օրհնութիւնը շատանալու համար տանդ  
դուռը ծածկեցիր և ծառային մի արծաթ տուիր  
հոգևոր հօր բուռը դնելու և անարգաբար յեա  
դարձնելու:

Տեսայ քեզ փողոցում հոգևորին պատահելիս.  
Չղաձգութեամբ ցնցուեցար և օտար նախապա-  
շարման երկիւղով կանչեցիր դժգոհութեամբ  
«այսօր գործս չի յաղողուի»:

Տեսայ քեզ ծաղրելիս հոգևորն և հոգևորին:

Տեսայ քեզ վերարկուն դուրս վտարելիս քո  
սեղանիցդ, քո յարկիցդ, իբր մի աններդաշնա-  
կութիւն քո հիւրերիդ մէջ, մի աչք ծակող թիւ-  
րիմացութիւն:

Տեսայ քեզ եկեղեցում պսակի ժամանակ  
յասակի վրայ շուրջ բոլորած թիկնած ու պառ-  
կած խորոված ուտելիս, զինի խմելիս:

Տեսայ քեզ եկեղեցու մէջ պատարագի ժա-  
մանակ աղքատ պառաւ կնոջ վերջին մի քանի  
արծաթը թոցնելիս:

Տեսայ քեզ հոգևոր վարժապետին վարժա-  
րանից դուրս վտարելիս:

Ա՛րբ, եթէ Դու այսպէս անտարբեր ես, երբ  
Դու այսպէս տրամադրուած դէպի հոգին ու հո-  
գևորը, ո՛ր, չեմ խոստանում թէ Դու լաւ հոգևո-  
րական ունենաս:

Եկեղեցու վերին անարդարութեան և քո  
ցուրտ անտարբերութեան երեսէն էլ ո՞ր խելքը  
զլիին, պատրաստուած, պատուաւոր երիգասարդը  
կգայ նստատինքի վերարկուն հագնելու:

Եկեղեցու վերին անիրաւութեան և քո ցուրտ  
անտարբերութեան երեսէն եկեղեցականութեան  
երկնքից շատ պայծառ աստղեր թօթափում են  
յուսահատ:

Ամփոփեմ խօսքս. Տագնապի զիշերն է հայ  
ազգի համար: Դրսի ու ներսի դաւադիր չարու-  
թիւն մեր մթին Գեթսեմանիի ծայրին ծակամուտ  
սպասում են մեր արեան ծարաւով: Իսկ մենք  
քնած ենք թմրութեան, ապիկարութեան, ան-  
տարբերութեան քնով:

Քնած է հայ ազգը, քնած են և հայ առա-  
քեալները. փորձանքը, դայթակղութիւնը կգայ  
մեզ վրայ և քնած կգտնի. էլ ոչ երկինքը մեզ

ոյժ կտայ դիմանալու, ոչ ուշացած աղօթքը կօգնի:

Պիտի արթուն մնանք, պիտի հսկենք, պիտի աղօթքով ոյժ առնենք, ոգևորենք մեզ որ փրկուինք:

«Արթուն կացէք և յաղօթս կացէք զի մի մաջիք ի փորձութիւն»:

Պօսքս վերջացնելուց յետոյ մի հեծեծանք եմ զգում կրճքիս մէջ: Հայ ազգ, իմ մայր ժողովուրդ, առաջ մայրական քնքշութեամբ զրկում էիր հայ հոգևորականին, քո իսկ ծնած ու սնած զաւակիրդ, եկեղեցու զաշտի վրայ աշխատելու: Քրտնաթոր ճակտով, յոգնած գլխով ու մարմնով երեկոյեան մենք տուն էինք դառնում: Դու մեզ ընդառաջ էիր եղում, մայր, սիրուն վարսերդ փռած, սէրն աչքերիդ մէջ կայծ դառած, անոյշ ժպիտը գէմքիդ թառած:

Քո զիրկն ընկնելիս մեռնում էր յոգնածութիւնը մեզնում, մեր երակները նորից եռանդով էին ուռչում ու նորից կարօտով սպասում էինք աղօթարանի բացուելուն, որ քո սիրուց պաշար կապած աշխատանքի զաշտն երթանք:

Իսկ այժմ Դու հիւանդ ես, անտարբերութեամբ հիւանդ, դէպի եկեղեցու զաշտի աշխատանքը: Աշխատանքի գնալիս՝ քո աչքը մեզ չի ընկերակցում և ոչ տուն դառնալիս՝ քո ժպիտն ենք տեսնում մենք: Մեր սրտերը դալկանում են, եռանդը ցամքում երակներիս մէջ, յոյսն է մեռնում աչքի մէջ:

Մայր, մայր, թմրութեան քունը թոթուէ աչքիցդ, վեր կաց, վեր կաց քո վերջին խօսքն առա. եթէ եկեղեցու դաշտի վրայ այլ ևս պէտք չէ աշխատիլ՝ չենք գնայ, միայն Դու մի վշտանայ: Այն դաշտի վրայ մեր սոսկալի ուխտը քո անունով ենք արել:

Մայր ժողովուրդ, մի որդի թողեց իւր հայրական տան մէջ միակ իւր մօրն և օտար աշխարհներ թափառելու, կեանք վայելելու գնաց: Երկար թափառումներից յետոյ՝ ճանճրացաւ աշխարհից և հայրենի տան ու մօր կարօտով՝ ծովով ճանապարհ ընկաւ դէպի տուն:

Տարիների կարօտով էրուած մօր համբերութիւնն էլ սպառեցաւ որդուն սպասելով: Սա էլ վեր կացաւ տան ճրագը հանգցրեց, դուռը դոցեց ու անտէր թողնելով՝ գնաց մի նաւ նստաւ, որ ծովով որոնելու գնայ որդուն աշխարհէ աշխարհէ ճանապարհին եկող ու գնացող նաւերն իրար հանդիպեցան. մէկի վրայ վերագարծող որդին էր քնած, միւսի՝ վրայ որոնելու գնացող մայրը:

Նրանք տեսան առանց միմեանց տեսնելու, ու չեղաւ մէկը, որ նրանց արթնացնէր, իրար տեսնէին ու գրկախառնուած տուն դառնային:

Երկուսին էլ սոսկալի յուսաբեկութիւնն էր սպասում. որդին պիտի հայրենի տուն հասնէր, դռները դոց, ճրագն հանգած, կրակը մարած, մօրը թռած պիտի տեսնէր:

Իսկ մայրը ճագը կորցրած հաւքու պէս աշխարհէ աշխարհ պիտի շրջէր ու «որդիս, որդիս»

պիտի կանչէր, մինչև որ յուսահատ գլուխը փշոտ  
մացառներին պիտի զարկէր ու ցրուէր:

Ա՛րդ, մայր ժողովուրդ, սոսկումն արբում է  
հոգուս, երբ մտածում եմ թէ մեր սառն, անմիտ  
բաժանումից յետոյ, երբ մենք կարօտինք քեզ  
ու տուն դառնանք, Գուն էլ մեզ որոնելու ելնես,  
իրար հանդիպող նաւերի վրայ քնած մնանք ու  
չլինի մէկը, որ մեզ արթնցնէ, որ իրար տես-  
նենք ու գրկախառն տուն դառնանք: Վնյ այն  
ժամին, եղճուկ մօրն ու զաւակին:



Ծանօթ. խօսուած է 1909 թ. մարտի 22. Բազուի  
ճայոց Ս. Լուսաւորիչ եկեղեցում:

### Յ Ո Յ Մ

«Յոյս ոչ երբէք ամաչեցուցանէ»։ (Հոսմ. Ե-5)։

Քրիստոնէական կրօնի վարդապետութեամբ երկնքում մէկ դաւանելի Ս. Երրորդութիւն կայ՝ Հայր, Որդի և Ս. Հոգի Աստուած։

Նրան համանիշ մի երկրաւոր երրորդութիւն, որի մէջ առաջնի նշոյլը, շողը կայ մարդու մէջ Միտքն է, Կամքը, Զգացմունքը։

Մարդու միտքը, կամքը, զգացմունքն իրենց մաքրութեան և բարի զարգացման մէջ պահող էլ երեք առաքինութիւն կայ՝ Աշխատանք, Հոգեկան տանջանք, Սէր։

Աշխատանքը, տանջանքը, սէրը, որոնց վրայ խօսել եմ, իրենց աստուածային ցոլքերով լուսաւորում, կրթում, ազնուացնում են մարդուն։

Ամենայն վատութիւն մարդկային կեանքի մէջ աշխատանքից, տանջանքից, սիրուց գուրս է։

Աշխատանքի դաճնութիւնը քաղցրացնող, տանջանքի այրող հուրը մեղմող, սիրոյ անծուխ բոցերին վայլ տուող մի ուրիշ առաքինութիւն Յոյսն է, անբաժան աշխատանքից, տանջանքից, սիրուց։

Երբ մենք աշխատանքի սիրով տողորուած դիմում ենք դէպի գործ, յուսոյ աստղն է առաջ-

նորդում մեզ մեր ճանապարհին, մենք չգիտենք թէ ուր կտանի մեզ յոյսը, բայց անյոյս գործել, անյոյս շարժուել, անյոյս գնալ մենք չենք կարող:

Երկունքի ցաւով տանջուող մօրն ոյժ, համբերութիւն, տոկունութիւն տուողը յոյսն է թէ՛ աշխարհի համար մարդ է ծնում, թէ՛ իւր տանջանքների բերքը երջանկացնող օրհնութիւնն է իւր և այլոց համար:

Երկրագործ մարդու աչքերը յուսով են ծովանում, երբ նա բուռ-բուռ ցորենը հողերի ծոցն է ցփնում զարնան օրերում: Քաջալերում է նրան յոյսը թէ՛ արևն ու անձրև նրան առատ հունձ կտան: Յոյսը վանում է նրա հոգուց կարկառի, երաշտի և այլ պատահարների սարսափեցուցիչ երկիւղը:

Իւր տուն ու տեղը, իւր ամուսնուն ու զաւակներին կարիքի դժնդակ ծոցումը թողնելով՝ բանուորը պանդխտութեան ցուպն է վերցնում դէպի անձանօթ, միջին աշխարհ, նրանց համար մի պատառ հաց աշխատելու:

Հրաժեշտի վերջին կսկծագին համբոյրը տալիս և առնելիս, թէ՛ ճանապարհին հաստատուն քայլերով շարժուելիս կամ կարօտով երերալիս, բանուորին սիրտ տուողը յոյսն է թէ՛ պանդխտութեան մէջ գործ կգտնի, հաց կվաստակէ և վերստին իւր սիրելեաց զիրկը կդառնայ:

Ահեղ փոթորիկների ժամանակ, երբ ծովերի երեսը լեռնանման ալիքներով է կնճռոտում և նաւը՝ մի թեթև տաշեղի նման, վեր ու վար

ցատկոտում նրանց բարձունքներում անդունդներն իջնելու վտանգով բռնուած, նաւապետի յուսալիր աչքերն են դէպի հեռու, դէպի աներևոյթ նաւահանգիստն ուղղուած:

Աշխարհէ աշխարհ թափառող անթև թռչնի՝ վաճառականի թևերն յոյսն է, պաշարը յոյսը:

Ամուսնացողի աչքից թագնուած է իւր ամուսնակցի սիրտը. յոյսն է քաջալերում միայն, որ ամուսնութեան ոսկի օղակով կապէինք զինքն մի անծանօթ, մթին սրտի հետ:

Աշխարհի անիրաւութեան, բիրտ ոյժի, խաւարի և պէս պէս հրէշաւոր չարիքների դէմ կուռող անզէն հերոսի սրտի մէջ յուսոյ արևն է շողում թէ իւր տանջանքը վախճանական յաղթանակն է տանելու զինավատ աշխարհի վրայ:

Յանուն որ և է գերագոյն գաղափարի իրենք զիրենք ցուրտ, գերեզմանի պէս սլաղ մենաւորութեան մատնած մարդկանց մենարանի միակ լոյսն ու ջերմութիւնը յոյսն է:

Գիտութեան սիրով այրւող ուսանողի սուկալի աղքատութիւնը, նպատակին հասնելու անհնարաւորութեան դառնութիւնը ճաշակելու համբերատարութեան գաղտնիքը յոյսն է:

Մեռնող հիւանդի վերջին վայրկեանների քաղցրութիւնը թէ նորից պիտի ոտքի ելնէ այս աշխարհում կամ պիտի ապրի մի ուրիշ, անծանօթ ու լաւագոյն աշխարհում դարձեալ յոյսն է:

Ամուսնու հաւատարմութիւնը, սէրը կորցրած տառապեալ ամուսնու ոսկեղէն երազը թէ կոր-

ցրածը վերստին կգանի յոյսն է:

Մորորուած, անառակ որդուն, մաքրուած զղջումով վերստին իւր գիրկն ընդունելու սիրտանքը ծնողի համար յոյսն է:

Խաչակիր, տառապանքի ճանապարհով յառաջ գնացող բայց դեռ անվհատ ազգի ոյժը միայն յոյսն է:

Բանտի անթափանց խաւարի մէջ, շղթաների զարկած, թարշամող, օր աւուր մեռնող հէգ կալանաւորի միակ մխիթարութիւնը յոյսն է:

Պատերազմի դաշտի՝ մարդկային այդ հակամարդկային սպանդանոց գնացող զինուորի քաջալերութիւնը յաղթանակի յոյսն է:

Յոյսը տեսանելի բան չէ. եթէ տեսանելի լինէր՝ յոյս չէր լինի. «Յոյս տեսանելի չէ յոյս, զի զոր տեսանէ ոք զի՞ ևս յուսայ» . (Հոով. Լ—24):

Յոյսը կեանքի անիւնները շարժող ոյժն է, հոգեպէս տանջուողի քաջալերութիւնն է, աշխատաւորի մխիթարութիւնն է, սգաւորի հրդեհուած հոգու վրայ տեղացող զովարար անձրկն է, ձրգտողի ոսկի երազն է, սիրողի անոյշ ցնորքն է, ազօթողի հաւատի հիմքն է, երիտասարդի ողորութեան թկն է, գաղափարականի համբերատարութեան գաղտնիքն է, ծերունու գաւազանն է, մեռելոց աշխարհի ճամբէն բռնողի վառ լապտերն է:

Սակայն շփոթելու չէ կենսունակ յոյսը քարացած, անշարժ յուսոյ հետ: Կենդանի յոյսն անբաժան է իւր զուգակից, իւր հաւասար ընկեր

մի ուրիշ առաքինութիւնից՝ եռանդից:

Կեանքը իւր տիեզերական ու մարդկային բոլոր արտայայտութիւններով յարատեւ շարժողութիւն է: Ուր շարժումն չկայ այլ միայն քարացումն, այնտեղ կեանք լինել չի կարող: Շարժիչ ոյժը եռանդն է, բուն ջանքերի գործադրութեան հակամետութիւնը:

Իւրաւոր հսկայական մեքենաների շարժողութեան դնող շոգին եռանդն է. ծովերի երեսով վազող և անեղ ալիքներին անեղագոշ մոնչիւնով սրտացող հողմերը եռանդ են. մութ ամպերի ծոցում ծնանող փայլակ ու կայծակի հրեղէն գետերն, որոնք վայրկենապէս երկնքի մի ծայրից միւսն են կտրում անցնում, եռանդն է:

Առանց եռանդի բոլոր մեքենաները պիտի կանգնէին, առանց հողմերի ջրերն անշարժութեան մէջ պիտի հոտէին, առանց փայլակների, կայծակի, առանց երկնային այգ եռանդազին պատերազմի օդը պիտի ապականուէր և կեանքը պիտի նեխուէր ու ոչնչանար:

Կենսունակ յուսով լի աչքերը չեն կարող փակուիլ. կենդանի, յուսացող մարդու ազնիւ երակներին միջով հոսում է եռանդի շարժիչ շոգին, որ մարմնի և հոգու բոլոր մեքենաները գործի է դնում, հոսում է անեղ մրրիկը և գէղ գէղ ալիքներով փրփրում միտքն ու սիրտը, հոսում է հուրը երկնային՝ շանթն ու կայծակը, որ այրում մաքրում մարդու մէջ փառութիւնը, մամուռաժը, ծուլութիւնը, այն ամէնը, ինչ որ

մահու գրոշմ է կրում:

Հասկանալի է թէ կեանքն առանց յոյսի և եռանդի կեանք լինել չի կարող:

Անշարժութեան մէջ ընկած կիսակենդան յուսացողը նման է անդամալոյծի, որի մէջ գործունէութեան բոլոր անիւները խորատակուած են, եռանդ բաշխող երակները ցամաքած:

Իգուր է հէգ, բարոյապէս անդամալոյծի յոյսը. նրա վրայ բարոյական մահն է սուսառնում:

Բայց սոսկալի է անյուսութիւնը, յուսաբեկութեան թոյնը, թոյներից ամենէն սոսկալին ծծւում, լցւում է յուսահատ մարդու սիրարը, երակները, մկանուէրները, ոսկորները, ամբողջ էութիւնը յուսահատութեան ծով է դառնում և այդ ծովի մէջ խեղդւում է մարդը, մթազնում է ուղեղը, քաշուում է աչքերի լոյսը, ցամաքում գէմքի երակները, ապուշ կտրած բլբլերը լողում են իրենց լճակի մէջ, ճմլւում է սիրարը, ընդարմանում բազուկները, կծկուում, փոքրանում է մարմինը, քամւում է երակներից եռանդի յետին կաթիլի, անդամալուծւում հոգին: Որպէս ստորերկրեայ խաւար բանդի մէջ ընկած մի հէգ կալանաւոր, կենդանի մարդ գերեզմանում, ուր լոյս և կեանքի ձայն չի հասնում: Քաղցրանում է մահը, որին կանչում է յուսահատն իբրև միակ փրկողի դառն ու դժնդակ յուսահատական տանջանքից:

Այս դեռ ամէնը չէ. շատ անգամ յուսահատը

խելագարուում է կամ ամենամեծ շարագործն է դառնում, թանձրացնում է իւր յուսահատ հոգու խաւարը խղճի սոսկալի խայթով և արագացնում է իւր թշուառ, եղուկ վախճանը:

Մենատի այս յուսաբեկութիւնը կարող է իւր մաշող, ջախջախիչ գիրկն ընդունել և ամբողջ մի ազգ:

Թուում է ինձ թէ Դու, հայ ժողովուրդ, անգիտակից, անզգալի կերպով խորասուզւում ես յուսահատութեան սև ծովը. ահա, ահա Դու իջնում ես դէպի վար, ջրերը բարձրանում են դէպի վեր. նրանք քո պարանոցն են հասել, մի վայրկեան ևս և Դու խեղդուել կարող ես:


Քո ձեռնթափութեան անցեալ փառքերից, քո վատարի ծուլութիւնն ու բարքերի այլանդակ խառնաշփոթութիւնը ներկայում հանել են քո հոգեկան աշխարհից հոգևոր վերածնութեան յոյսը և Դու դարձել ես երերուն իբրև փայտի կտոր ծովում, որ մերթ ալիքի թևով դէպի ծովի խորքն է գնում, մերթ դէպի փի ժայռերն է մղւում:

Եղկելի է քո վիճակդ, և յոյժ ցաւալի, որովհետև միայն ամբարիշտ մարդու, ամբարիշտ ազգի յոյսն է կորչում. «զի յոյս ամբարշտի կորիցէ» (Յոր. Լ. 3): Միայն այն ազգի յոյսն է մեռնում, որի մէջ ոսկրացել է ամենայն մարդկային, ազգային և քրիստոնէական առաքինութիւններ, միայն նրա բերնից կարող է լսուել յետին մահաշունչ այս մրմունջ. «Չորա-

ցան սուկերք մեր, հատաւ յոյս մեր և մեռաք»  
(Նզեկ. 15—):

Սաղայն մահամերձ հիւանդի, մահամերձ ազգի դեռ լսելու ընդունակ ահանջին փրկութեան, վերակենդանութեան այս անոյշ ձայնն է գալիս. «Յուսով խնդացէք, նեղութեանցն համբերեցէք, աղօթից ստէպ կացէք» (Հռոմ. ԺԲ—12): «Այլ մենք՝ զի տունջեան եմք, արթունք եղիցուք և զգեցցուք զզրահն հաւատոյ և զսիրոյ և զիցուք զսաղաւարդն յուսոյն փրկութեան» (Թեաղ. առ. Ե—8): «Զի յուսով պարտի որ սերմանէն՝ սերմանել և որ կասուն՝ յուսով վայելել»: (Կորնթ. ա. Թ—10):

«Աշխատեցէք, յուսացէք» (Գէօթէ). «Յոյս ոչ երբէք ամաչեցուցանէ»:



Ծանօթ. խօսուած է 1909 թ. մարտի 8 Բագուի Հայոց Ս. Լուսաւորիչ եկեղեցում: Նոյն իմաստով Շուշու վերին թաղի եկեղեցում:

## ԱՂԱՏՈՒԹՅՈՒՆ

«Ազատութիւն...» ահա ըստ երևոյթին այն նոր Աստուածը, որի առջև ծալուով են երկրպագութեան բիւրաւոր ծնկներ, որի սեղանի վրայ՝ որպէս նարտասի անուշբոյր իւր, որպէս Արաբիոյ խունկ ու կնդրուկ, բուրում է ժամանակակից աշխարհը իւր ամենէն բորբոք զգացմունքները:

«Ազատութիւն» է թոթովում այժմեան պատանին, ազատութիւն ողջունում իւր քնարական ձայնով կինը, ազատութեան քաջամարտիկ գինուոր գրուում արիւնաշատ երիտասարդը, ազատութիւն գրկում այր մարդը, ազատութիւն ներբողում ազատութեան գինիով զուարթացած աշուղը:

Մէկ խօսքով ժամանակակից նորածին մանկան անդրանիկ ճիչն ազատութիւնն է, գերեզմանի բերանում մեռնող ծերունու հոգեվարքի վերջին կարօտակէզ հառաչանքը ազատութիւնն է:

Ազատութիւնը նորագոյն Աւետարանի սկիզբն ու վախճանն է, Այբ—ն ու Քէ—ն:

«Ազատութիւն տուէք ինձ, պէտք չեն ինձ ձեր շղթաները թէկուզ ոսկուց լինին նրանք. ինձ ազատութիւն տուէք». ահա ժամանակակից ազօթքն ու մրմունջը:

Եւ այս աղօտ, տարերական դարձած հոգեկան ձգտումն, բնազդն անտարակոյս սխալ չէ, այլ պահանջ, բնութեան օրէնքներով սահմանուած արդար իրաւունք:

Միայն ազատ հողի վրայ է աճում երջանկութիւնը, միայն ազատութեան մէջ կարելի է երջանկութեամբ լի կրծքով շնչել միայն ազատութեան միջնորդութեան է ծագում հանճարի լոյսը:

Իսկ մարդկային կեանքի վախճանական նստակն է, անմեռ ձգտումն է երկրիս վրայ երջանիկ լինել. այսինքն երկու ուրախութիւնից, հոգեկան բաւականութիւնից մեծն ընտրել, երկու վշտերից մեծիցը խուսափել:

Բայց ինչո՞ւ Ազատութեան սրբազան կուռքի ուխտաւորները երջանիկ չեն մեր օրերում. էլ ինչո՞ւ է ազատութեան այս օրերում թշուառութեան ամպն ու մշուշ ծածկել մեր երկիրը:

Ազատութիւն է վայելում օրապահիկով աշխատող արհեստաւորը, որի ամբողջ կեանքի յետ ձգած վաստակը պիտի լինի վաղաժամ ծերութիւնը, կոշտացած, փայտանման ձեռքեր, յուսաբեկութեան խեղտումից յառաջ եկած արբեցութիւն:

Ազատութիւն է վայելում գործարանական հէգ բանուորը, որի սրտի վէրքն առաւել խորն է քան արհեստաւորինը: Մաքուր օդի կարօտով նա ճնշուած կրծքով շնչում է մետաղի գոլորշին, ածուխի ծուխը, հանքերի հեղձուցիչ օդը: Մերթ

կրակի քուրաների առաջ խաշուելով, մերթ ցրտի զիբլը նետուելով, նա մաշում, նա հիւծում է իւր սմուր ջլերը, թուլացնում մարմինը, լքանում՝ հոգին: Մահը սաւառնում է նրա շուրջը, չորեքիուսի շօշափում նրան ամէն վայրկեան, արդեօք հանքի ստորերկրեայ գերեզմանում լեռը՝ որպէս տապանաքար, կնստի՞ նրա վրայ իւր անեղ ծանրութեամբ, եթէ գործարանում անողոք մեքենան թոցնելով կտանի նրա թևը, ոտքը, թէ հերդեհի բերան կրնինի նա կամ նափտի հորում կլուացուի նրա դիակը: Իսկ կի՞նը, գաւակնե՞րը...

Ահա մեր օրերի ազատ բանուորի խոհերը, որոնց փշերով լիքն է նրա ծոցը:

Ազատութիւն են վայելում մաքուր հազնուած, օւլայած շափիկով պսպղուն գործակատարները: Վշտերի խորութիւնը չափելու հոգեկան տանջանքները կշռելու չափն ու կշիռը չկայ, որ ըմբռնել կարողանայինք թէ ո՞ր տեսակի վիշտ է թառած այդ մաքուր հազուստի ներքև:

Քարացած անշարժ նստել գրասեղանի շուրջը վաղ առաւօտից մինչև ուշ երեկոյ, գիտակցել թէ կայ մտաւոր բարձր գրադմունք, հոգեկան վայելք, որը անհասկանալի է իրեն. ժպիտով ընդառաջել իւր պարոնին և շողոքորթելով մի ողջոյն քաղել նրա դաժան դէմքից, որպէս զի վաղը փողոց չնետուի, որպիսի դուռն է հոգեկան տանջանքի:

Ազատութիւն են վայելում մանրիկ վաճառականները. սակայն բաղտաւոր կոչուել չեն

կարող և սրանք, որոնց մրցակիցները կարող են առաւել ճարպիկ լինել, վարկաբեկ անել նրանց: Նախանձի և մրցակցութեան հուրը այրում է սրանց հանգիստը, թունաւորում երջանկութիւնը:

Ազատութիւն է վայելում հայ վարժապետը, հայ գրագէտը, մտքի այս մշակները: Բայց չեն կարող երջանիկ լինել նրանք, որոնց ճնշում է կեանքի անարդարութիւնը, անմտութիւնը, խաւարը տեսնելիս, որոնց դէմ մաքառելու անգօրութիւնը այրում է նրանց ուղեղը: Այսպիսի հոգեկան տանջանքը միայն մտքի մշակին է մատչելի:

Ազատութիւն է վայելում «բարձր» կոչուած շրջանը, արիստոկրատ և հարուստը: Ո՞վ կկարծի թէ որ և է մռայլ ամպ կարող է ծածկել նրա պայծառ երկինքը: Մակայն երջանիկ չեն և սրանք, որոնց մէջ վայելքի ծարաւն անյազ է, կրակն անշէջ, որդն՝ անմեռ:

Ազատութիւն է վայելում կինը. ըստ երևոյթին նա սիրոյ աղբիւրն է. երջանիկ այն ակնէն խմողը, երջանիկ ինքն աղբիւրը: Մակայն կանանց կեանքից հիւսուած յրամանները լսելիս աչքդ արցունքով, սիրտդ արիւնով է լցւում. սէրը՝ երջանկութեան իսկական աղբիւրը թունաւորուած է, դարձել է արցունքի և արեան աղբիւր:

Նարեկացու լեզուն, Դանտէի գրիչն էր պէտք պատկերաւորելու այն գեհներ, որի մէջ գլխակորոյս տառապում է այսօր հայ ազգը. այն վհատութիւնը, որ թանձր շերտով իջել է մեր

հոգեկան աշխարհի վրայ, ուր թագաւորում են բոլոր յոռեանս փիլիսոփաները:

Բայց այս իրականութեան միջից դեռ խուռում են ճառեր թէ մենք ազատ ենք, ազատութեամբ երջանիկ:

Սօսքի և իրականութեան այս հակադրութիւնը, կեանքի այս հակասութեան աւաղելի պատկերը յառաջ է եկել երկու էական պատճառից. մէկն այն արհեստական հանգամանքներից, միջավայրից, որոնց փշոտ գրկում ապրելու ու գործելու ենք դատապարտուած մենք, որի վրայ կանգ առնելն ու խօսիլը եկեղեցու շրջանակից դուրս է և միւսը ազատութեան զաղափարի սխալ բմբռնումից:

Գողն ու աւագակը ազատութեան անունով է արդարացնում իւր գողութիւնն ու յախշաւորութիւնը:

Կոպիտն ու անքաղաքավարին ազատութեամբ է բացատրում իւր անվայել արարքը:

Ապերախտ ու ապիրատ որդին ազատութեամբ է արդարանում իւր ծնողի առաջ:

Անպարտաճանաչ ծնողն ազատութեամբ է մեղմում իւր յանցանքը լքած, անխնամ, զաւակների առաջ:

Անհաւատն ազատութեան անունով է վանում մեր կեանքից կենդանի Սատուծուն:

Անկրօնն ազատութեան անունով է վիրաւորում այլոց կրօնական զգայմունքը:

Ազգաւերն ազատութեան անունով է կոր-

ծանուծ ազգութեան ճիմքը:

Արբեցողն ազատութեան անունով զիակնանում կենդանի մեռելի տիպարով:

Տգէտն ու թերունն ազատութեան անունով են կոխկրտում քաղաքակրթութեան բարիքները:

Մարդասպանն ազատութեան անունով ներկում իւր ձեռքերը վարդագոյն արիւնով:

Մէկ խօսքով ազատութեան Սուրբ գաղափարն իսպառ աղաւաղուած է մեր մէջ. դանձել է զրկանքի, բռնութեան, վայրենութեան գաղափար և ստեղծել է այն սոսկալի թշուառութեան ծովը, որի մէջ խեղդում է մեր տառապեալ ազգը վերից վար անխտիր:

Այդ տեսակ ազատութիւնը մեր ամենուս բանսն է, կախաղանն է, գերեզմանն է:

Դա մի ազատութիւն է, որ Բահաղի կուռքիցն էլ առաւել արիւնըռուշտ է, մարդախանձ ու դաժան:

Ո՛չ, եղբայրներ, վատ գործերի մէջ չկայ, չի եղել ու չի լինի ազատութիւն: Եսական, կարճամիտ, չարանենգ նպատակներով գործելը սանձանափակումն ունի, կաշկանդումն ունի և պիտի ունենայ:

Այդ աղաւաղ մտքով չկայ ազատութիւն ոչ երկրիս վրայ և ոչ երկնքում:

Տիեզերական բոլոր մարմիններն իսկ, բիւրաւոր աստղերն անսահման, ազատ եթերքում շարժւում են, բայց նրանք փոխադարձ ազդեցութիւններով, ձգողական ոյժով կաշկանդում

են իրար բացարձակ ազատութիւնը և այդպիսով պահպանում իրենց դիրքը, իրենց փայլը:

Մարդիկ ազատ են, բացարձակ ազատ իրենց գործերի մէջ միայն այն չափով, որ չափով որ չեն վնասում իրենց և չեն վտանգում այլոց ազատութիւնը: Երբ քո ազատութիւնն ուրիշի ազատութիւնը պիտի վտանգէ, Ֆիզիքական ազատութիւն, սնտեսական ազատութիւն, բարոյական՝ ազատութիւն, կանգ առ, այլևս իրաւունք չունիս յառաջ գնալու, ազատութեան սահմանին հասար: Երբ քո բազկի ոյժը ուրիշի մարմնի վրայ ես ուզում փորձել, երբ ուրիշի քրտունքն ես խլում աշխատողի ճակտից, երբ կոպտութեամբ ուզում ես վիրաւորել այլոց զգացմունքները, կանգ առ, դու ազատ չես. դու արդէն ելար սրբազան ազատութեան սահմանից ու բռնութեան սահմանը մտար: Զգոյշ, ազատութիւնը վերջանում է այնտեղ, ուր բռնութիւնն ու վայրենութիւնն է սկսում: Քաջ իմացիր, որ բռնութիւնը ծնանում է բռնութիւն, արիւնը՝ արիւն, հրդեհը՝ հրդեհ, ոյժը՝ ոյժ,

Ազատութիւնը՝ եղբայրներ, նախ և առաջ ազատ, անկաշկանդ, շրջահայեաց միտք է. մի միտք որով ըմբռնում ենք թէ ինչ գործ կատարենք որ մեզ Ֆիզիքական, նիւթական, բարոյական շահ բերի և ուրիշի շահը չվնասի, որով և ապահոված կլինինք մեր անհատական ազատութիւնը:

«Ամենայն ինչ ինձ մարթէ, այլ ոչ ամենայն

ինչ ինձ շահ»։ անա ազատ մարդու մտածողութեան օրէնքը։

Նշանաւոր անգլիացի փիլիսոփան (Թոմաս Կարլէյլ) կանչում էր յանդիմանութեամբ. «Անգլիացիք, հարիւր տարուց աւելի օրէնքների ազատութիւն ենք վայելում, բայց մինչև այժմ չկարողացանք օգտուիլ ազատութիւնից»։

Նախ և առաջ մարդ ազատութիւն պիտի զգայ իւր հոգու մէջ, իւր մտքի մէջ, իւր խղճի մէջ։

Եթէ այսպէս չեն զգում և ըմբռնում մեր ժամանակի փրկիչներն ազատութիւնը, նրանք դժուար կարողանան հաւասարութիւն և եղբայրութեան գաղափարը տարածել. նրանք չեն կարողանայ ոչ բարոյապէս մեռած ու հոտած Ղազարոսներին կենդանութիւն տալ և ոչ մոլորուած Մարիամ Մազթաղենացուն բարձրացնել իւր ընկած տեղից։

Ճշմարիտ, իրական, բարձր ս. ազատութեան պայծառ ճակատը զարդարւում է մի աննման պսակով, այդ Սէրն է, հրաշագործ Սէրը, որ միայն մատչելի է ազատ հոգիներին։

Ազատն Աստուած, որ դարերով պահպանել է ազգային ազատասիրութեան անարատ ողին, որով կանք, շնչում ենք, չենք մեռել, հեռու մեզ ազատութեան սխալ, մոլար ըմբռնումից, որ ներկայի հիասթափութիւնն է, անյատակ վիշտն է, ապագայի կորստաբեր վհատութիւնն է։

Ազատ եղէք, եղբայրներ, սիրեցէք ազա-

տութիւն, գործեցէք ազատ, մի թոյլ տաք որ ուրիշները կոխկրտեն ձեր ազատութիւնը անմաքուր ոտքերով. բայց զուք ևս սահմանափակեցէք ձեր ազատութիւնը, երբ այլոց ազատութեան սահմանը հասնէք:

Ազատ՝ եղէք, բայց ամենից առաջ յանցանքից ազատ:




---

Ծանօթ. խօսուած է 1909 թ. յունուարի 18-ին Բազուլի Հայոց Ս. Լուսաւորիչ եկեղեցում: Նոյն իմաստով Շուշու Մայր եկեղեցում:

## Ս. ՎԱՐԴԱՆԱՆՅ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Վարդագոյն յիշատակներ, որ հնութեան դարերի գաղանարաններից, անցեալի սրբազան ծոցից անմեռ հրեշտակի թևով դէպի վեր էք ելնում, կանգնում էք մեր հոգեկան աշխարհի մշուշապատ հորիզոնում, որպէս վաղորդեան ծաղկած արև, ձեր առջև ենք սիւսում այսօր ձեր իսկ ծոցից քաղած մեր լաւագոյն զգացմունքների խնկաբոյր ծաղիկները. ձեր պատուանդանի վրայ ենք բուրում ջերմ հաւատի զգացմունք՝ որպէս խունկ անուշութեան, սիրոյ զգացմունք՝ որպէս կնդրուկ եղբայրական ուխտի, ճշմարիտ ազատութեան զգացմունք՝ որպէս ողջակիզի ձենձեր, բուրմունք փրկութեան:

Հազար ծնրադրութիւն ձեր առջև, բիւր բերան փառք ձեզ:

Հայ եղբայրներ, անագորոյն է ժամանակը, բայց անարդար չէ: Սղոցածե, սրաբերան ու շիկացած են նրա ձեռքերը. նա սղոցում ու ցփնում, նա մաշում ու փոշիացնում, նա հալում ու հոսեցնում է ամենայն ինչ՝ մարդկային ու փժուէն, ախտաւոր ու եսական, որոնք կեանքի օրօրոցից ծագումն առնելով՝ կեանքի ճանապարհով յառաջ են շարժւում դէպի այն գուրը, որ գերեզման է կոչւում, այն անդունդը՝ որ յաւի-

տենական մոռացութիւն է կոչուում:

Բայց ժամանակի մաշող ձեռքն անգոր է հպիլ իսկ այն վսեմ ու սրբազան յիշատակներին, որոնք կեանքի ճանապարհի վրայ երկինքանդ ծիածանի կամարով կանգնած են անշարժ ու յաւիտեան. որոնց պատուանդանը երկիրն է, օթեանը՝ կամարը, բարձունքը՝ երկինք. ճառագայթները բխւելով աման զազափարներն են, գոյները՝ ազնիւ, շողշող զգացմունք:

Քունը՝ մեր օրերի փոթորիկներու դրած փոշին թոթուէ հողուղ աչքերից, հայ մարդ շարժէ, թող զարթեն սրաիզ մէջ քնած ազնիւ զգացմունքները, որ տեսնես թէ՛ Ս. Դևոնդեանց ու Վարդանանց յիշատակներից հիւսուած ծիածանը 1500 տարի կամար կապած կանգնած է դեռ Հայոց աշխարհում, մի ոտքը Արատաղի Աւարայր դաշտում յենած, միւսը՝ Յունաց սահմանում, ուր վերջին հայն է ապրում:

Ժամանակը 1500 տարի իր աւարը տանելով անցել է ու դարձել նրա տակով և չի հպել նրան, այլ յարզանքի գլուխ խոնարհել այն արձանացած զազափարների առջև, որ հայ ազգի պարծանքն են եղել, երկրպագութեան առարկան, քաջալերութեան ոգին, ոգևորութեան կայծ ջեռուցիչ, կեանք ու կենդանութիւն...

Այն օրերում խորհրդաւոր ու սուրբ լուծութիւնն էր թագաւորում Հայոց աշխարհում:

Լուծութիւնը այն սրբազան տարերքն է, որի զբիւրմ մեծ գործերն են ծնանում:

Քրիստոնէական հեղութիւն հագած, եղբայրական սիրոյ ոսկեշող ծիրանին ձգած, ազատութեամբ սպառազինուած, հաւատով ու գրչով գինուած, առաքինութեամբ գօտեորուած հայ ազգն անձայն լութեան մէջ պատրաստում էր իր կատարելութեան, իր փրկութեան գործը:

Սարսուռ ու զարգանդ է պատում մարդուն, երբ բացարձակ լութեան դիմացն է կանգնած. որովհետեւ լութեան սրբազան տեսալին ոյժ է, ոյժերից գերագոյնը:

Յիշեցէք ձեր կեանքից.

Երբ լուսնկայ խաղաղ գիշերին կանգնած էք եղել կամ հովտի միջին, կամ լեռան լանջին և ձեր շուրջը բացարձակ լութիւնն է տիրել, միթէ ձեր սիրտը՝ որսէս մի տերև զեփիւռի առաջ, չի դողդողացել լութեան առաջ:

Երբ դուք կանգնել էք մի մարդու առջև, որի ճակատը խորշումն է պատել. մտայոյց, խոհուն, լռակեաց մարդու այն սուրբ լութիւն միթէ չի գործել հոգեկան ոյժի մեծ ազդեցութիւն:

Երբ դուք սիրել էք սրտի բարկ սիրով ձեր հոգեկան աշխարհի խորունկ ու անբարբառ լութեան մէջ, միթէ առաւել ուժեղ ու հզօր չէք դգացել ձեզ, քան այն ժամանակ, երբ լեզուն, ձայնը ընդհատել են ձեր հոգու լութիւն:

Յիշեցէք քրիստոնէական Ս. Կրօնի պատմութիւնից. միթէ՞ այն երկնառաք սուրբերը, որոնք աշխարհի մշտավառ լոյսն են, անհամ կեան-

քի՛ աղն համեմիչ, չե՞ն խորունկ լուսթեան հա-  
րազատ որդիք, միթէ՞ նրանց աննման գործերը  
չեն հիւսուել լուսթեան հրաշալի ծոցում:

Կամ թէ՛ իմաստուն, խելքի մեծ մարդիկն  
իրենց բազմածին մտքի արգասիք չե՞ն հիւսել,  
կազմել լուռ առանձնութեան մէջ...

Այո՛, ո՛յժ է, զարգանդ թափող, ոգի տուող  
ու առնող մեծ ո՛յժ է լուսթիւնը:

Ահա այսպիսի խորհրդաւոր լուսթիւն էր  
տիրել Հայոց աշխարհին, մեծ գործերի երկուն-  
քով բռնուած համըութեան այն սուրբ օրերում,  
երբ արևելեան բռնաւորի՝ Յազկերտի ազգախո-  
շող ատրուշաններն էին բորբոքուած: Եւ նա  
սարսափեց Հայոց աշխարհի վրայ փոռած լուս-  
թիւնից:

Նա փղերի շարքեր, գէնքի շառաչիւն, ձիերի  
տոփիւն, զօրաց ձայն անեղ ուղարկեց Հայաս-  
տան, որ սպանեն նրանում ահաբեկող լուսթիւնը:

Կործանուեցան ս. տաճարներ, գետնատա-  
րած ընկան ամրոցներ, նահատակութեան արիւն  
հոսեց, ս. Առնոգ, Վարդան և ս. Վարդանանք  
վարդազոյն փոռուեցան դաշտերի վրայ, բայց  
Հայոց խոհական լուսթիւնն անպարտելի մնաց:

Յազկերտի ոյժն ու որոտը փշրուեցան լուս-  
թեան ու սիրազեղ միութեան մէջ կռած ու  
կոփած գաղափարների վահանի վրայ, որոնք՝  
իրբև Վարդանանց գործ, նրանց անմեռ յիշատակի  
ճակատին զբոշմուեցան և ուղեցոյցը, կեանքի  
նշանաբանը դարձան դարէդար ու սրահականեցին

անկորուստ հայ ազգն ու անուն:

Այդ նշանաբանն է՝ հայ քրիստոնէի ս. հաւատ, ազատ, անկաշկանդ ապրելու անյողողղ կամք, Հայոց լեզուի անոյշ մրմունջ ու թոթովանք՝ սէր, յոյս և կատարելութեան հօր ձգտումն: Այս ամէնը, ինչ որ սուրբ ու նուիրական դարձաւ հայի համար, ծրարուեցաւ իբրև անզուգահեռ սրբութիւն ու պահուեցաւ ազգային ս. եկեղեցու անարատ ծոցում, իբրև ուղեցոյց և առհաւատչեայ մեր ազգային գոյութեան. իբրև սուրբ լուսութեան մէջ ճառագայթած լոյս, որ մեր ուղին պիտի լուսաւորէ:

Ահա այդ յիշատակի, այդ նշանաբանի առաջն են ծալուում այսօր մեր ծնկները. այդ լոյսն է, որ պիտի առաջնորդէ մեզ մեր օրերի արհաւիրքների կատարեալ խաւարի մէջ, ուր անզունդներ են բացել կոյրերի համար գերեզմանափոր դիւանագիտութիւնը՝ դրսից, հայկական ինքնասպան անմտութիւնը՝ ներսից:

Արդ, այս խորհրդաւոր ու սուրբ տօնին ի՞նչ նուէր բերեմ քեզ, հայ ազգ. տառապեալ ես ինչպէս ոչ ոք, թշուառ ու եղկելի՝ ինչպէս մի հէզ մարդ, որ ոտքի տակի հողը, յենարանը կորցնելով, անզունդն ընկնելու վտանգով է բռնուած և... և չի տեսնում և չի գիտակցում:

Ազգային նշանաբանը մոռացել ես կամ ուրացել, որ Վարդանանց արեամբ է կնքուած:

Լոյսի ու փրկութեան ծարաւով դէպի նոր կեանքի արշալոյսն ես ձգտում, բայց չես նկա-

տում, թէ երեսդ դէպի վերջալոյսի խաբուսիկ շողերն է գարձած, որ քեզ դէպի կեանքի արևմուտքն է հրապուրում:

Արձանացած էիր մեր սիրուն հայրենեաց լեռների բարձունքներում, ի՞նչ եղաւ քեզ որ խախտուեցիր ու կտրակ քարի պէս դէպի վար ես գլորուում, դէպի օտար անդունդ ու ձոր, ուր թագնուած ժայռեր կան, որոնց վրայ փշուր փշուր պիտի լինիս:

Մեր սարերի անաբառ ծոցից բղխող ականակիտ աղբիւր էիր. ի՞նչ եղաւ քեզ, որ ակունքներիցդ խուսափելով այժմ դէպի օտար գետերն ես վազում: Խեղճ ու մոլորուած վտակ, դու՛ իբրև մի երակ կմանես անեղ գետերի մէջ, կխառնուես ու կոչնչանաս:

Ճշմարիտ հայրենասիրութեան ծաղկավառ ծիրանին ձգած էիր վրայ ու նախանձելի էիր յաչս օտարաց. ի՞նչ եղաւ քեզ, որ կուրացար ու չտեսար թէ ինչպէս չար թշնամին զողացաւ այն ծիրանին և նրա տեղը ուսերիդ վրայ ձգեց օտարամոլութեան ներկած ցնցոտին.....

Ի՞նչ նուիրեմ քեզ այսօր, այս խորհրդաւոր ու սուրբ տօնին, որ կոյր թափդ կանգնեցնի, գլորւնդ քար, որ հոսանքիդ ուղղութիւնը փոխի, մոլորուած աղբիւր, որ դու նորից հայրենիքի հողն ու ծաղկունքն ուողես:

Լուութիւն, միայն սրբազան լուութիւն:

Աստուածապարգև լաւագոյն շնորհներից մէկը լեզուն է, մարդկային բարբառն է: Սակայն

պարզեւ է նա և շնորհ միայն այն ժամանակ, երբ ծնունդ է առնում մեր հոգեկան աշխարհի երկնադ լուսթիւնից, երբ նա բեկւում է մեր խորունկ, անձայն գիտակցութիւնից, երբ քամւում է իբրև անապական շուր մեր բազմազան խոհերի անեղ բաղխումից:

Այդ տեսակ լեզուն ոյժ է, հրաբուզիս է: Երկիրդ դարերի ընթացքում լուսթեան մէջ ծածկուած ծոցում հաւաքում է իր ոյժերը, ծրարում հուրը իր երակներում ու ոչ ոք զիտէ: Այդ անբարբառ լուսթիւնից յանկարծ պոկւում է երկրի բոբոք շունչը, որպէս հրաբուզիս ու սարսափ տարածում իր շուրջը:

Այն, հրաբուզիս է լեզուն, երբ լուս գիտակցութիւնից է բղխում:

Բայց երբ մեր հոգեկան աշխարհի, մեր գիտակցութեան և լեզուի կապը կարւում է, երբ լեզուն սկսում է դառնալ բերանի մէջ լոկ ականջից մանող օտարաշունչ հովերի ազդեցութեամբ, ինչպէս մի թեւուոր անիւ հոսանքի առաջ, այն ժամանակ նա չարիք է, չարիքներից չարագոյնը. նա այն սուր բահն է, որ ազգի լայնաբերան գերեզմանն է փորում:

Այսպէս է այժմ մեր լեզուն, մեր անբնդհատ ձայնն ու բարբառը, որ լուսթիւն չգիտէ:

Երբ լուսթիւնը, խորհրդաւոր ու սրբազան լուսթիւնը տիրէ մեր մէջ, այն ժամանակ կարծնի մեզնում գիտակցութիւնը, կրօնավառութիւն պէսպէս ազնիւ զգացմունքները և մեր ձայնը ծըն-

ծղայի զօղանջիւնն չի լինի, այլ թովիչ կենդանի խօսք մեզ համար, սասանարար հրաբուլիս՝ թըշնամու համար:

Լուսթիւնը մեզ կտովորեցնէ երջանկութեան ճանապարհը, կատարելութեան անշեղ ուղին, որ իսկական Սէրն է:

Ո՞ւր է կատարեալ սէրը մեզ համար:

Բանաստեղծի մէկը իր հայրենի օջախի մէջ, իր մայրական յարկի տակ կատարեալ սէր չէր տեսնում: Կատարեալ սիրոյ կարօտով նա աշխարհէ աշխարհ, սարէ սար, ծովէ ծով թափառելու, կատարեալ սէրը գտնելու ելաւ:

Նա ծաղկանց մէջ գնաց, որոնեց ու կատարեալ սէր չգտաւ:

Նա գեփիւռի ու դալարու համբոյրը գիտեց ու կատարեալ սէր չգտաւ:

Նա եղբայրների մէջն որոնեց ու կատարեալ սէր չգտաւ:

Նա ընկերների մէջն որոնեց ու կատարեալ սէր չգտաւ:

Նա ամուսինների մէջն որոնեց ու կատարեալ սէր չգտաւ:

Նա աղքատութեան մէջն որոնեց ու կատարեալ սէր չգտաւ:

Հարուստների մէջն որոնեց ու կատարեալ սէր չգտաւ:

Նա լքեալ ու գլխիկոր իր հայրենի տունը դարձաւ:

Մայրը՝ իր պանդուխտ գաւակի կարօտովն

այրևող մայրը, որդու ձայնը լսելով՝ դուրս վազեց բազկատարած ու գրկաբաց:

— Մայր, մայր, կանչեց որդին հայրենի տան շէմքի վրայ մօր գիրկը նետուելով. աշխարհէ աշխարհ թափառեցի կատարեալ սէրը գտնելու յուսով ու չգտայ: Այժմ, երբ մայրական պայծառ աչքերիդ մէջը նայեցի, կատարեալ սէրն այնտեղ գտայ:

Հայ ազգ, կատարեալ երջանկութեան ու սիրոյ կարօտով ելեր օտար վայրերում կատարեալ սէր ես որոնում: Ի՞նչը քո վաստակ: Դարձիր, դարձիր դէպի մեր հայրենի տուն, մեր հայկական սրբազան օջախ, մեր Լուսոյ Մայրը՝ ազգային ս. եկեղեցին, թէև իր իսկ զաւակների ձեռքով փետտած վարսերով, նրա շէմքին կեցած, կատարեալ սէրը պայծառ աչքերի մէջ՝ քեզ է սպասում...

Իսկ մենք՝ քո արհամարհուած հովիւներս համբերութեամբ, հաւատով և յուսով պիտի աղօթենք մինչև հասնի այդ սրբազան վայրկեանը:

«Տես, Տէր, գտառապանս մեր... Դարձ, Տէր և դարձո՛ւ զմեզ, նորոգեա՛ս զմեզ Տէր, որպէս զաւուրս զառաջինս...»:

---

Ծանօթ. խօսուած Բագուի Ս. Լուսաւորիչ եկեղ. 1907 թ. Ս. Վարդանանց տօնի օրը: Նման իմաստով Շուշում:

## Յ Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

«Մեզ և ձեզ մեծ աւետիք

Քրիստոս յարեալ ի մահելոց»

«Այս, սրբ կոտէ լեզուն չայոց

«չայն էլ յարեալ ի մահելոց»

(Փաճ. Փաթ)

Վերստին առ մեզ դարձաւ դարուն:

Ծիծառը՝ դաշտերին, արտուան՝ արտերին  
աւետիք բերին անոյշ ճոռուղով թէ՛ դարունն է  
եկել ու իր երփներանգ թիւերն է տարածել  
բնութեան վրայ:

Ծաղկանց բոյրը, թռչնոց ազու երգը հիաց-  
ման խունկն են, նուազն են դարնան երեսին,  
բնութեան վերակենդանութեան առաջ:

Աւետարեր ծիծեռնակի հետ մէկտեղ քրիս-  
տոնէից հողեկան աշխարհում բերկրութեան ու  
աւետեաց մի ձայն հնչեց տաճարի բարձունքից.  
«Յարեալ Բրիստոս»:

Այդ աւետիքը մեռեալ հոգիներին ի յարու-  
թիւն կոչող հրաւիրակն է, բեկեալ սրտերը վե-  
րաշինող հրաշագործ հրեշտակն է, յայտերի ցամ-  
քած աւազանը անոյշ խոխոջով լցնող աղբիւրն  
է, հաւատի հանգած կանթեղը վառող երկնային  
կայծն է, ատելութեան դաշտերում ցաք ու ցրիւ  
ցանուած ոսկրներին մարմին և արիւն տուող

սէրն է, ինքը՝ բարոյական ու երջանիկ վերա-  
կենդանութիւնն է, կեանքն է:

Եւ Հովին հաւատացելոց բերկրութիւնից  
ճոխացող սրտով հե՛ ի հե աւետում է՝ վերակեն-  
դանութիւնը մարդու:

«Մեզ և ձեզ մեծ աւետիք, Քրիստոս յարեալ  
ի մեռելոց»:

«Քրիստոս յարեալ ի մեռելոց», այս ճշ-  
մարտութիւն է, իսկ ճշմարտութիւնն աւետիք է:

Մարիամ Մազթաղենացու հաւատով լի հո-  
գին, սիրով գեղուն սիրտն ու աչքը տեսան Նրան՝  
Յարուցեալին գերեզմանից ոչ հեռու: Նա լսեց  
Տիրոջ ձայնը:

«Կին Դնւ, զի՞ լաս»:

Յարուցեալն իջաւ սիրող աշակերաների  
դռնփակ հանդիսարանը և ձայն տուեց.

«Ողջո՞յն ընդ ձեզ»:

Թերահաւատ Թովմաս շօշափեց Նրա տիգա-  
խոց կողն ու սարսափահար կանչեց.

«Տէր իմ և Աստուած իմ»:

Տիրերական ծովի ափում երևեցաւ Նա  
աշակերաններին ու սիրոյ ձայնը վերստին եկաւ  
ու բաղլսեց նրանց սկանջն ու սիրտը:

«Մանկունք, միթէ ունիք ինչ ուտելոյ»:

Նա լսուեց Պետրոսի հետ:

«Միմոն Յովնանու, սիրե՞ս զիս. արածեա  
զգառինս իմ»:

Նա ուղեկցեց էմմաուս գնացող աշակերա-  
ներին և ճաշեց նրանց հետ:

Նա Բեթանիայի բարձունքներն հանեց նրանց, վերջին պատուէրը տուաւ, օրհնեց և վերացաւ Երկինք:

Դարեր անցան ու կանցնին, վերակենդանութեան տօնն եկաւ ու պիտի գայ միշտ գարնան հետ յաւիտեանս ժամանակաց և պիտի հնչէ միշտ հաւատացեալների սրտում Յիսուսի անմահութեան աւետարեք վկայութիւնը բազմաթիւ աշակերտների.

«Մեք տեսաք զՆա, մեք իսկ վկայ եմք, Քրիստոս յարեալ ի մեռելոց»:

Անմաքուր ձեռքդ յետ քաշիր, սվ նիւթապաշտութիւն. մի հպիր յարութեան վսեմ ու սուրբ իղէալին, սահմանափակ միտք մարդոյ: Իղէալը հակողութեան կարօտ չէ: Մարդկային իմաստութիւնը ճշմարիտ երջանկութեան դեղն ու դարմանը չունի իր ձեռքում:

Այդ սր իմաստութիւնն է մարդկային, որ կարող լինէր երջանկութեան սիրտինք ցօղել թշուառ մարդկութեան հոգու մէջ, որչափ արել է այդ Յիսուսի սքանչելի յարութեան քաղցրալուր համբաւը, որ անմահութեան յոյսն է տարածում իր թևերով, որ վերակենդանութեան իղէալովն է մեղմում թշուառութիւնը, հալածում ախտերը, ազնուացնում հոգին մարդու:

«Գաղափարը-իղէալը նիւթի պայմաններին չի ենթարկուում: Առաքինութիւնն ու բարութիւնը մահուան յարձակումներին մատչելի չեն»:

Անմահութիւնը գաղափարի, սիրոյ փառա-

պանծ յաղթանակն է մարմնի վրայ, իրականութեան վրայ:

«Ներք անմահացաւ զաղափարը, էլ արժէ մարմնի վրայ խօսիլ»:

Գաղափարական մարդու դաւանանքն է այդ հաւատով մարդու և ազգի անժխտելի համոզմունքն է թէ՛ «Քրիստոս յարեալ ի մեռելոց, յարուցիչն մեռելոց»:

Սէրը չի մեռնի, սէրը յարութիւն է բերում, սէրն անմահ է:

Անմահ է և ս. Յարութեան իրողութիւնը. իսկ որ ինչ անմահ է, ճշմարտութիւն է:

«Մեզ և ձեզ մեծ աւետիք, Քրիստոս յարեալ ի մեռելոց»:

Դարեր ու ժամանակներ բարձրագոյ ձայնով վկայում ու կրկնում են թէ ս. Յարութեան, անմահութեան իգէալը Քրիստոնեայ հայ ազգի «Սրբութիւն սրբոցն» է եղել: Գաղափարն է վերկել հայ ազգին, գաղափարով է նա գնել ու պահել իր կեանքն ու անմահութիւնը նիւթեղէն ոյժի կոպիտ բռնութեան գերութիւնից:

Աւանդ մեր օրերուն: Մահագոյն մի թմրութիւն է իջած այժմ հայ ազգի հոգեկան աշխարհում, որի պայծառ երկնքից մէկիկ մէկիկ թափւում են վսեմ գաղափարների բոցավառ աստղերը, ուր տիրում է մի անթափանց խաւար, հագեկան խաւար, բարոյական մահու սոսկալի ստուերը:

Վանք ու մենաստան, որ դարերից ի վեր

քրիստոնէութեան ս. գաղափարները նիւթապաշա աշխարհի անմաքրութիւնից, աղաւաղումից ազատելու համար, Յիսուսի ս. գործը բարձր պահելու ուխտարաններն եղան, այժմ էլ իղէալ չունին կարծես իրենց գաւթում: Յոյսը, սէրը, հաւատն, անմահութիւնը խոյս են տուել վանքերից. կրօնաւորի հոգին դէպի վեր, դէպի բարձր, դէպի իղէալները սաւառնելու էլ թե չունի. մաքուր երկինքը խիստ բարձր է մնացել նրանից, խիստ հեռու, փծուն երկիրը՝ խիստ մօտ:

Մ.Ա.Ն կրօնական:

Մամուլ ժամանակակից, որ հին օրերի կայծակնաշուրթն մարգարէների և իմաստուն առաջնորդների դերն ստանձնելու յաւակնութիւնն ունի, նրանց փոխարինելու է կոչուած, դէպի վեր, դէպի վսեմ իղէալների աշխարհն ուղղելու ժողովրդի սիրտը, ինքն առաթուր արկաւ ամենայն սուրբ և վսեմ գաղափար. ծաղրեց, հեզնեց իղէալական աշխարհը, խորտակեց ժողովրդի անարատ սիրտը և աչքը դէպի նիւթը, դէպի հողը խոնարհած կրքերի տապով յառաջ է գնում կուրացած, իր ետեից դէպի յուսահատութեան խաւարը քարշ տալով տառապեալ ժողովրդին:

Մ.Ա.Ն գաղափարական:

Քահանայութիւն, որ կոչուած է յասպարէզ Յիսուսի անունով ու ձայնով ժողովրդի սրտերի մէջ հաւատի խունկ բուրելու, աւետարանի սրբազան գաղափարներն արծարծելու փառաց տաճարի մէջ, այնտեղ էլ իղէալ չի տեսնոււմ.

Նրա ծնկներն էլ չեն ծալուում Յիսուսի առաջ։  
Որ կոչմնաւորն էր, վարձկան եղաւ։

Ման ըստոյական։

Մեռած է հայ ժողովրդի ազնիւ սիրտը, մեռած նրա սուրբ իդէալները, որոնք չորեքօրեայ Ղազարոսի նման դիակնացած պառկած են անկենդան այն խաւար այրի մէջ, որ մարմին է կոչուում։

Նորից գարունն եկաւ. նորից կեանքն ու կենդանութիւնը բնութեան ծոցից յարութիւն առան, յարեաւ կեանքի պսակն Յիսուս, Յարուցիչն մեռելոց։

Յարութիւն կանեն քո հոգուդ մէջ էլ, հայ ազգ, մեր ընտիր քրիստոնեայ նախնեաց սուրբ իդէալները. լեզուդ պիտի թոթովէ՞ արդեօք թէ «Հայն էլ յարեաւ ի մեռելոց», թէ հայի հոգու մէջն էլ անմահ գաղափարները վերակենդանացան . . . .

Հազար երանի այն օրը. այն ժամանակը միայն մեր հոգու աչքը կանսէր Յարուցեալ Փրկչին։ Նա մեզ հետ սեղան կըսմէր. Նա մեզ կմխիթարէր անմահութեան քաղցր խոստումով և մենք սիրով մէկմէկու վզով կիարուէինք ի համբոյր սրբութեան ողջոյն տալով։

«Մեզ և ձեզ մեծ աւետիք, Քրիստոս յարեաւ ի մեռելոց» և Նրա յարութեան շնորհիւ՝ «Հայն էլ յարեաւ ի մեռելոց»։

## Ս Ե Ի Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր Ը

«Լոյս, արարիչ լուսոյ, առջին լոյս, բնակեալդ ի լոյս անմատոյց, ի ծագել լուսոյ առաւօտու, ծագեան ի հողիս մեր զլոյս քո իմանալի» (Ս. Ներսէս ճնորհալի):

Այն օրերը մեծի պահոց օրեր էին:

Սե վարագոյրը սուրբ տաճարի բեմն էր եզերել, ինչպէս այսօր: Ս. սեղանի փառքն ու փայլը ծածկուած էր աղօթող ս. հայրապետի աչքերից:

Գարնան առաւօտու մանուկ ճառագայթն իր մաղաղ մատերով խաղում էր տաճարի վարագոյրի հետ և բիւր սրբազան խորհրդածութիւններ յուզում հայրապետի տաճարանման հոգու մէջ:

Իր բացափառ աչքերը սեռեցով վարագոյրի այն կէտին, ուր վաղորդեան արևի թարմ համբոյրն էր դրոշմուած, Շնորհալին ս. Ներսէս իր շնորհաբուզի հոգուց շնորհաբաշխ շրթունքներով աղօթքի ու հիացման մրմունջ էր վեր առաքում դէպի բարին ու գեղեցիկը, դէպի ճշմարիտն ու անանցը, դէպի վսեմն ու կատարեալը, դէպի Աստուած յաւիտենական. «Լոյս, արարիչ լուսոյ, առաջին լոյս.....»

Եւ վեհ զգացմունքների, սուրբ խոհերու

անոյշ խոնկը բորբոքում էր Շնորհալու խնկաման սրտում, ալիք-ալիք դէպի վեր ելնում և մեղմիկ աւաչով ու սրտակէզ կարօտով երգում ու կրկնում էր. «Լոյս, արարիչ լուսոյ...»

Իսկ աչքերը միշտ ի վարագոյր, շեշտ ի վարագոյր:

Վարագոյր, որ տեսքովդ լոկ հոգեշունչ հայրապետի զգացմունքները թեւաւրեցիր. որպէս զեփիւռի թե հպար մեծ մարդու քնար սրտին ու այնտեղից ազու վառաբանութիւն քաշեցիր, սրն է քո դօրութիւնը, ինչո՞ւն է քո նշանակութիւնը:

Հայ քրիստոնեայ եղբայրներ, տիեզերական օրէնք է, որ աշխատանքն ու վայելքը մէկմէկույս շորդեն. աշխատանքը ժխորի մէջ, վայելքն՝ առանձնութեան մէջ:

Բոյսերի և ծաղկանց ժպտերես հանդիպումը իր հպումով արթնացնող արևին, երբ նրանք պէտք է սնունդ ծծեն ջերմից ու ջրից, աշխատանքի ժամերն են:

Իսկ երբ արևն՝ իր օրական շրջանն առնելով, իր մուտքի առջև մի բոցավառ հայեացք է փռում կարած ճանապարհի վրայ ու աչքը դուրս ելով իր քնարանն է իջնում, խաղաղութեան նիրհը թափւում է բոյսերի վրայ՝ վայելքի ժամերն են եկել:

Երբ թռչունները հատ-հատ ու երամ-երամ իրենց բոյնը թողնելով սլանում են դէպի անասանման եթերքն անոյշ ճուղղով և՛ լեռ ու հո-

վիտ չափչփելով, պաշար են ժողուում, աշխատանքի ժամերն են եկել:

Իսկ երբ վաստակած ու դուրեկան յոգնութեամբ թեերը ծալած ու նստած են կամ բաց կամ փակ ըրերով իրենց բոյներու մէջ, վայելքի ժամերն են եկել:

Երբ կենդանին ու գազանը՝ լեռներում, մարդը՝ դաշտում գործ են գործում, վաստակ ցանում կամ ժողուում, աշխատանքի ժամերն են եկել:

Իսկ երբ մէկն իր տուն, միւսն իր բոյնն է յետ դարձել, խաղաղութեան սուրբ ծոցում անգորբ հաճոյքն է գրկել, վայելքի ժամերն են եկել:

Այս տիեզերական ու տիրական օրէնքից չէ շեղում և մարդու հոգեկան աշխարհը:

Մարմնով վաստակել ու հոգով վայելել, ժխորի մէջ գործել ու խաղաղութեան ծոցում վաստակն ու բարիքը խորհրդածել, վսեմ գործերի ու գաղափարների վայելքը ճաշակել, աշխատանքից անմտութեամբ քաղած թոյնը ջուր չկել դէն նետել և միայն մեղքը վայելել, մարդու հոգեկան պահանջն է:

Եւ այդ տիրական օրէնքի հիման վրայ քրիստոնէական եկեղեցին յատուկ օրեր է կարգել, սրբազան խորհուրդներով լի ապաշխարութեան օրեր, որոնք ճշմարիտ վայելքները խորհելու և ճաշակելու օրեր են:

Խորհրդաւոր վարագոյրը ծածկում է մեր աչքից աշխարհն իր ժխորով, պէս-պէս աշխա-

ասանքն ու կրքերի կրկէսը և մեզ ընկղմում է մեր հոգեկան աշխարհի առանձնութեան մէջ:

Սնւրբ անապատ՝ առանձնութիւն, ուր միայն ընդունակ ենք դառնում մեր ամբողջ ուշադրութիւնը կենդրոնացնել մեզ վրայ. ուր կոչումն ենք զգում աշխարհի առօրեայ ու մարմնաւոր հոգսերիցը կտրուել և անձնատուր լինել մի վերին ու սուրբ գաղափարի, որ արդարութիւն է կոչւում, որ առաջնորդում է մեզ դէպի յաւիտենական արդարութիւնը, որի բարձունքում ինքն Աստուածն է կանգնած:

Հոգեկան այս առանձնութեան մէջ, երբ մեծ մարդիկ ծածկել, կտրել են վարագուրով իրենց գիտակցութիւնը սովորական հոգսերի աշխարհից, այստեղ են կազմել իրենց վսեմ գործերը, այստեղ են վայելել վեհ գաղափարների քաղցրութիւնը, այստեղ է ճառագայթել նրանց համար իսկական լոյսը, որ ճշմարիտ կեանքն է լուսաւորում, այստեղ են մերկացել իրենց մարդկային սխալանքները, ախտաժէտութիւնը, այստեղ են զգացել արդարութիւնը:

Սրգարութիւնը մեր հոգու էական պահանջներից մէկն է:

Անարգարութիւնը՝ որպէս դժուարատար բեռ, ծանրանում է մեր սրտի վրայ և մենք բողոքում ենք աշխարհի անարգարութեան դէմ:

Բողոքում ենք ապօրինի և օրինաւոր բռնութեան դէմ, բողոքում ենք անհաւասար աշխատանքի և վայելքների դէմ, բողոքում ենք

արիւնբոսուշտ բարբարոսութեան և հիւժող սարը-  
կութեան դէմ, վասն զի այդ ամէնն անարդա-  
բութիւն է:

Սուրբ է այդ բողոքը, սակայն միայն բողոքը  
չէ, որ կատարելութեան է տանում մարդուն.  
միայն բողոքը չէ արդարութիւն. արդարութիւնը  
միայն բողոք չէ:

Արդարութեան թագաւորութիւնը պիտի տա-  
րածուի մարդու հոգեկան աշխարհի վրայ:

Կրկնակի է ծագիկները գեղեցկութիւնը, երբ  
նրանց վրայ գարնան առաւօտու ցօղն է շողում:  
Եթէ մարդկային միւս առաքինութիւնները ծաղ-  
կունքն են, արդարութիւնը ցօղն է, վայն է,  
պսակն է նրանց վրայ:

Միայն արդարամիտ մարդն է, որ անարդա-  
բութեան դէմ բողոքելու իրաւունքն ունի:

Մեր կեանքը մշտաբարբառ բողոք է դարձել.

Մեր երկրի լեռ ու հովիտ, դաշտ ու դուրան  
բողոքով ծածկուեցան: Քարաժայռերի ձերպերից  
բողոք է բեկուում, երկինք ու երկիր արձագան-  
քով են կրկնում մեր անլուս բողոքը:

Բողոքում է հովին իր հօտի դէմ, բողոքում  
է հօտն իր հովուի դէմ. բողոքում է հարուստն  
աղքատի դէմ, բողոքում է աղքատն հարստի դէմ.  
բողոքում է աէրն իր բանուսրի դէմ, բողոքում է  
բանուսրն իր տիրոջ դէմ. բողոքում է աշակերտն  
իր ուսուցչի դէմ, բողոքում է ուսուցիչն իր  
աշակերտի դէմ. բողոքում է երիտասարդը՝ ձե-  
րութեան դէմ, բողոքում է ձերունին երիտա-

սարդի դէմ. բողոքում է բռնաւորը սորկի դէմ, բողոքում է ստրուկը բռնաւորի դէմ...

Ապաշխարութեան այս խորհրդաւոր ժամին, խորհրդանշան սև վարագոյրի գիմացը, հոգեկան այս սիրուն առանձնութեան մէջ, հայ եղբայրներ, առվայրկեան մի կտրենք մեր հայեացքը արտաքին աշխարհից, մեր մտքից անշամանդաղ մի ճառագայթ արձակենք դէպի մեր հոգեկան աշխարհն ու սրտի մաքրութեամբ հարց տանք մեզ.

Արդեօք արդար է մեր բողոքը:

Հայ հովիւ, երբ օտար թովիշների ձայնիցը մոլորուած քո բռնաւոր հօտը ազգային սուրբ փարախիցն ելաւ ու ցաք ու ցրիւ եղաւ, արդեօք մղկացող ձայնով սիրոյ սրինդդ նուագեցիր նրա ետևից, որ առ քեզ դառնայ: Արդեօք կարո՞ղ ենք մենք՝ հովիւներս Երկնաւոր Հովուի սուրբ պարծանքով կոչել. «Ես եմ Հովիւ քաջ, Հովիւ քաջ դանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց»: Արդեօք մեր ալանջին չի՞ հնչում Տիրոջ զայրագին ձայնը. «Ո՛հ, հովիւք, որ կորուսիք զխաշինս արօտին իմոյ»:

Եթէ ոչ և եթէ այո՛, հայ հովիւ, քո բողոքը չէ՞ արդար:

Հայ ազգ, արհաւիրքների ծոցում, մոլորութեանց մրրիկների ու հոսանքների ուժգին-ուժգին բաղխման ժամանակ, երբ հոսանքատար ցաք ու ցրիւ, բաժան-բաժան եղար զայլերի բերանն ընկնելու համար և հայ արժանաւոր հովուի

սրտամորմոք ձայնը հնչեց, որ քեզ ժողուէ հայ-  
բենի փարախը, կամեցանք լսել նրան:

Եթէ ոչ, հայ ազգ, քո բողոքը չէ արդար:

Հայ մեծատուն, երբ ոսկեցող ու լուսաշաղ  
ապարանքումդ սեղան նստած փրփրուն վայելքն  
ես տեսնում քո առջև, միտքդ եկան թէ դրանդ  
աղքատ Ղազարն է ընկած, վիրաւոր ու արնքամ,  
ցամքած շրթունքներով, պարքեալ բերանով. և  
քարասիրտ մարդուց առաւել զթոտ շները լիզում  
են նրա վէրքերը:

Եթէ ոչ, հայ մեծատուն, քո բողոքը չէ  
արդար:

Հայ աղքատ, որ զթոտ ու սրացաւ հայ  
մեծատան առատ ձեռքից առատ հաց ու սփո-  
փանք ստացար, արդեօք սիրտդ երախտագիտու-  
թեան սուրբ զգացմամբ ջերմացան գէպի նա,  
թէ բարեբարիդ մեկնած ձեռքը չանգուցիր ու  
երեսն արնոտեցիր, չար կատու:

Եթէ ոչ և եթէ այո, հայ աղքատ, քո բողոքը  
չէ արդար:

Հայ տէր, որ վարդ կարած այտերովդ ու  
սիգապանձ քայլերով շրջում ես հարիւրաւոր  
դալուկ գէմքերի մէջ, որոնք օրնիրուն կորաքա-  
մակ աշխատում են քրտնլող՝ գործարանիդ, հան-  
քերիդ կամ խանութներիդ մէջ, արդեօք մի ձայն  
քո խղճի մէջ չի՞ հնչում թէ աշխատանքի ժա-  
մերը շատ, վարձն է պակաս բանուորիդ:

Եթէ ոչ, հայ տէր, քո բողոքը չէ արդար:

Հայ բանուոր, երբ բարի տէրն աշխատանքի

քիչ ժամեր ու բաւարար, շատ վաստակ քեզ տալով արդարութեան կշիռը ձեռքին է շրջում, դուն էլ հաւատարմութեամբ ու ջանասէր քո գործով հատուցիր նրան արդարապէս այդ բարիք:

Եթէ ոչ, հայ բանուոր, քո բողոքը չէ արդար:

Հայ աշակերտ, երջանիկ պատանեկութեան հոգևոր կեանքի հորիզոնում մի բոցավառ աստղ է փայլում: Այդ ուսումնասիրութեան լուսաստղն է, այդ է քո իդէալը. նայէ ու տես, հայ տղայ, այդ աստղը չէ՞ դալկացել կամ ընկել ու չքացել: Կամ ծուլութեան, ուսումնատեսցութեան մութ ամպերով չէ՞ ծածկուել. ո՛հ, այն ամպերում յուսովդ ապրող ծնողների ու հէզ ազգի աչքն է անձրևում: «Սկիզբն իմաստութեան երկիրդ Տեառն է», հայ տղայ, արդեօք այդ սրբազան երկիրդով դու լեցուն՝ իսկի կանգնում, աղօթում ես այն աստղին:

Եթէ ոչ, խեղճ տղայ, քո բողոքը չէ արդար:

Հայ վարժապետ, որ՝ յանձին աշակերտներիդ, ծնողների աստուածապարզև դերազոյն գանձն է քեզ յանձնուած: Արդեօք դու մի ճարտար բրնձ ես, որ առաքինութիւններով զուգես ու զարդարես, սիրով խնամես պատանեկական մաքուր սիրտը, թէ բռնութեան ու կոպտութեան մի անխմաստ հարուածով, որպէս անպէտք մի խեցի, փշրում ես ու դէն նետում սիրտը մարդու՝ կեանքի ճրագը բոցավառ:

Եթէ ոչ և եթէ այո, յոյժ անարժան վարժապետ, քո բողոքէ չէ արդար:

Եւ այլն, և այլն, և այլն...

Ո՛հ, անարդարութեան երեսից փտեց մեր կեանքը, ինչպէս որդնկեր մի ծառ, որ այլևս օտար մրրիկների չի դիմանայ:

Զկայ աշխարհիս վրայ մի գետ, որի ընթացքն այնքան երկար լինի, որչափ հայ ժողովրդի թափած արեան հոսանքն է երկար: Կա սկիզբն առաւ Տաւրոսի բարձունքներից, նորանոր վտակներով յորդացաւ Վոսփորի ավերում, կարեց Ռուսաստանն ու անցաւ, հասաւ Սպահան ու մօտենում է պարսկական ծովին:

Այդքան արիւնը յիրաւի բարբաբոսութիւնն ու նենդ դիւանագիտութիւնը թափեց, բայց նախատուոր հանգամանքը մեր անարդարութիւնն էր:

Ա՛րդ, ինչպէս ազատուենք կորստաբեր անարդարութիւնից:

Դարմանը ս. եկեղեցու սոհմանած առանձնութիւնն է, ինքնաքննութիւնն է, ապաշխարութիւնն է, զղջումն է:

«Ապաշխարութիւն, զղջումն», որպիսի հեղնութեան ժպիտ է ծագիում շատերի գէմքին այդ բառերը լսելիս, որոնց համար դրանք հնչում են որպէս մեռած անցեալի տասպանագիր, որպէս յետամնացութեան անուն:

Սակայն այդ ժպիտն է, այդ ծիծաղն է, որ մեզ պիտի կորցնի, այդ մեծամիտ արհամարհանքը մարդկային հոգու այդ երկու մեծ ու ազնիւ գործողութեան վրայ:

Զղջումն ու ապաշխարութիւնը այնքան հին

են, որքան և մարդը. այնքան նոր ու թարմ, որքան մարդկային հոգին: Նրանք կհնանան ու կմեռնին միայն այն ժամանակ, երբ մարդկային հոգին անսխալական և կատարեալ կլինի:

Կար ժամանակ, երբ մարգարէն Եսայի զղջման ու ապաշխարութեան էր հրաւիրում անգեղջ ու անապաշաւ ազգին և ծաղր ու ծանակ դառնալով Էտրուենկ վշտով գուշակում էր.

«Երկիր ձեր աւերակ, քաղաքք ձեր հրձիգ, գաշխարհ ձեր առաջի ձեր օտարք կերիցեն, աւերեալ և կործանեալ յազգաց օտարաց»:

Կար ժամանակ, մեծ մարգարէն Յովնաննէս անապատից ձայն արձակեց. «Ապաշխարեցէք, զի մերձեալ է արքայութիւն երկնից»:

Եւ ծաղրեցին, և սպանին:

Կար ժամանակ, որ մարգարէները լրումը՝ մարդացեալն Աստուած զղջման հրաւէր կարգաց նոյն անխրատ ազգին ու ծաղրուեցաւ, ու սրտի ցաւով Հրէաստանի աւերը, Երուսաղէմի կործանումը գուժեց ու խաչ բարձրացաւ ապաշխարութիւնն արհամարհող ազգի ձեռքով:

Եկաւ ժամանակ, մարգարէները նախատեսութիւնը կատարուեց. Վէսպասեանի հուրը ձարակեց Հրէաստան, Տիտոսի սուրը արինով սղտեց Երուսաղէմ, անարդար ժողովրդի թշուառ մնացորդը ցաք ու ցրիւ եղաւ մարգարէները անէծքը շալակած:

Հայ ազգ, սիրական ազգ, անարդարութեամբ աւեր սիրտ սենեցող ազգի տունն ու երջանկու-

թիւնը ոչ կատարեալ օրէնքներ, ոչ ցանկալին ազատութիւն, ոչ ինչ, ոչ մի բան շինել կարող չեն:


Անարդարութիւնը խաբուսիկ՝ բայց գեղեցկութիւն է, հմայքն աչքերի մէջ: Պատրանք է նա, աչաց վարագոյր, որ միայն զղջացողի, ապաշխարողի գիտակցութեան բորբոք ճառագայթները առջևն է այրւում ու չքանում:

Ջղջումն, ապաշխարութիւնը հերոսութիւնից հերոսագոյնն է: Խորհրդանշան սև վարագոյրը, հնյ ազգ, քեզ հերոսութեան է կանչում, քեզ արդարութեան է հրաւիրում:

Փութա աչքդ ու սիրտդ սևեռելու սև վարագուրի վրայ, փութա զղջման արցունքով կարգալու ամէնօրեայ աղօթքը. «Օրհնեալ Տէր, ուսն ինձ զարդարութիւնս քո»: Փութն ճշմարիտ լոյսն աղերսելու Շնորհալու հիասքանչ մրմունջով. «Լոյս, Արարիչ լուսոյ, առաջին լոյս, ի ծագել լուսոյ առաւօտու՝ ծագեան ի հոգիս մեր զլոյս քո իմանալի»:

Անարդարութեան ձեռքով նահատակուած արդարութիւնը շուտով յարութիւն պիտի առնի. փութն, որ երբ պատուհասող Անմահութիւնը գայ քեզ անարդարութեան մէջ մեռած, քարացած չգտնի:

Աչքդ Սև վարագուրին սևեռիր ու ընդառաջ փութն արդարութեան, որ անմահութիւնն է:



Ծանօթ. խօսուած է 1907 թ. Մեծի պահոց 3-րդ կիւրակէ Մոսկուայի Հայոց եկեղեցում:

## Վ ր ի պ ա կ ն ե ր

Ննդրում եմ ընթերցողներին առանձին ուշադրութիւն դարձնել հետեւալ սխալների վրայ, ուղիղը տեղը գնել և այնպէս կարդալ: Սխալների շատութիւնը հետեւանք է տպարանից հեռու լինելու: Բաց եմ թողնում կետերի բազմաթիւ սխալները:

Եր.	Սխալ	Ուղիղ
5	հաւատամներ	հաւատարիմներ.
7	տաղն զգացինք	դաղն զգացինք
14	Աստուծուն	Աստուծուն
»	Նա իւր զգացմունքով... Նա իւր...	Նա իւր զգացմունքով... Նա իւր...
19	Յովերն ու հողմեր...	Հովերն ու հողմեր
22	անապատի մխիթարութիւնը	անապատի մեռելութիւնը
25	գիտէ սատանան	գիտէ սատանան
27	չի շէնանայ	չի շէնանայ
28	անստելի հաստատութիւն են	անժխտելի հաստատութիւն են
»	և թէ նա սնունդի կարօտ է	և թէ նա էլ սնունդի կարօտ է
30	չորեք կուսի	չորեքկուսի
»	Անդլիան է	Անգլիան է
32	Արամազդի վէտութեամբ	Արամազդի վէտութեամբ
39	Հայոց հին արև-Միհրին	Հայոց արև-Միհրին
41	այդ նոր կառուցած	այդ նոր կառուցումն

Եր.	սխալ	ուղիղ
51	անոյշ աւագով	անոյշ ոււաչով
54	չսարսափեք	չսարսափիք
58	...նրանց խմբում հայ հոգևորին, քեզ տեսայ	...նրանց խմբում հայ հոգևորին, քիչ տեսայ.
60	սուրբ ներսը	սուարը ներսը
61	այսօր գործն չի յաղողուի	այսօր գործն չի յաջողուի
62	երիզատարդը	երիտասարդը
63	երանհերիս մէջ	երակների մէջ
68	յուսալիբ աչքերն	յուսալից աչքերն
	» ոսկի օղակով կապէինք զինքն	» ոսկի օղակով կապէ ինք զինքն
	» զինավատ աշխարհի վրայ	զինավառ աշխարհի վրայ
71	քաշուում է աչքերի լոյսը	քաղուում է աչքերի լոյսը
	» յետին կաթիլի	յիտին կաթիլը
72	քո ձեռնթափութեան	քո ձեռնթափութիւնն
74	որպէս նարտոսի	որպէս նարդոսի
75	յուսաբեկութեան խեղտումից	յուսաբեկութեան խեղզումից
76	եթէ գործարանում	թէ գործարանում
81	հեռու մեզ ազատութեան	հեռու պահէ մեզ ազատութեան
86	ազգախոշոյ ատրուշաններն...	ազգախոշոյ ատրուշաններն
	» ձիերի տոփիւն	ձիերի դոփիւն
89	Երկիրդ դարերի	Երկիրը դարերի
93	ճոխացող սրտով	ճխացող սրտով
95	Մահագոյն մի թմբութիւն	Մահանագոյն մի թմբութիւն
101	զգացիլ արդարութիւնը	զգեցիլ արդարութիւնը





ՀԵՂԻՆԱԿԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

1. Քարոզչական թոժովանքներ Ա. (սպասուած) 30 կ.
2. Քարոզչական թոժովանքներ Բ. 40 կ.
3. Անարդարութեան երեսից (սպասուած) — —
4. Հայրապետական ընտրութիւն 30 կ.
5. Թարգմ. «Գրքերի ընտրութիւն» Ռիչարդսոնի 60 կ.
6. Հրատ. «Գաստիարակութեան չօրութիւնը» 20 կ.
7. » Անժամանակ թատրոն և ընթերցանութիւն . 20 կ.  
(երկուսն էլ փոխադրութիւն մանկավարժ Սեդրաք Մանգինեանի)
8. Երուանդ վարդապետ Տ. Մինասեան և Հայոց  
եկեղեցու վերանորոգութեան ինդիքը 20 կ.
9. Էջմեխձնի արդարութիւնը մասն Ա. 25 կ.
10. Քարոզչական թոժովանքներ Գ. 20 կ.



Դիմել՝ Тифлисъ, Книжный магазинъ Гуттенбергъ -  
կամ Էջմեխձին՝ ԲԵՆԻԿ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ.







